

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ «ՎԱՆԱՁՈՐԻ Դ. ԱԼԻՇԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ**


ԹԻՎ 27



2024 - 2029թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԱՆԱՁՈՐ-2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



Ներածական մաս.....3

Դպրոցի մասին տեղեկատվություն.....6

Իրավիճակի վերլուծությունը

- Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վերլուծությունը.....9
- Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծությունը.....33
- Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ հաստատության համագործակցության ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը..... 45
- Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը..... 54
- Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը, ուժեղ կողմերն ու թերությունները..... 80

Նպատակների և խնդիրների սահմանումը

- Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների բարելավում..... 90
- Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների բավարարում..... 98
- Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ հաստատության համագործակցության բարելավում.....101
- Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում..... 105
- Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածության ապահովում, թերությունների շտկում..... 108

Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները

- Սովորողների ակադեմիական առաջընթացն ու կրթության որակի բարելավումը.....115
- Աշխատակազմի կառավարման և մասնագիտական զարգացման համակարգի արդյունավետությունը..... 116
- Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը և մասնակցայնությունը..... 117
- Դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը և կիրառությունը..... 118
- Մանկավարժական ինքնավարության և ակադեմիական ազատության ապահովումը..... 119
- Բոլոր շահառուների համար դրական և ապահով մթնոլորտի ապահովումը.....120

ՀԱՎԵԼՎԱԾ..... 121

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ



Մեր օրերում կրթությունը առանցքային դեր է խաղում մարդու կյանքում, քանի որ դրա օգնությամբ մարդիկ կարող են հասնել անհավատալի բարձունքների, իրենց համար կարիերա կառուցել, լինել պահանջված և պրոֆեսիոնալ մասնագետներ՝ այդպիսով ապահովելով թե՛ սեփական բարեկեցությունը, թե՛ պետության կայուն զարգացումը: Որքան բարձր որակի կրթություն կարող է տալ պետությունը, այնքան բարձր է նրա մրցակցային առավելությունը այլ երկրների նկատմամբ: Ստացվում է, որ որակյալ կրթությունը յուրաքանչյուր պետության մտավոր ներուժի զարգացման, անվտանգության, տնտեսական աճի ապահովման, ինչպես նաև պատասխանատու, կարողունակ և իրավագիտակից քաղաքացի ձևավորելու միակ ճանապարհն է: Ուսումնադաստիարակչական գործընթացն է ձևավորում մարդուն, նրա անձնական հատկությունները, ինչպիսիք են՝ կարգապահությունը, վճռականությունը, դրական վարքագիծը, հանդուրժողականությունը, մարդասիրությունը: Հայաստանը, որպես զարգացող պետություն, ևս կրում է պատասխանատվություն՝ որակյալ, մասնակցային, ներառական կրթական համակարգ ձևավորելու համար, ուստի, և ներկայումս ամբողջապես փոխվել են կրթության նկատմամբ մոտեցումները, կրթակարգ կառուցելու մեթոդներն ու գործիքակազմերը:

Վերջին երեք տասնամյակներում հանրակրթական համակարգը մեր երկրում շատ մարտահրավերներ է հաղթահարել, բազմաթիվ բարեփոխումներ են իրականացվել, որոնց մի մասը որևէ դրական արդյունքի չեն հասցրել: Արդյունքում՝ պետությունը կրել է ֆինանսական ահռելի վնասներ, սակայն սայրը տեղից այդպես էլ չի շարժվել՝ կիսախարխուլ դպրոցներ, հնամաշ մարզագույքով սպորտդահլիճներ, ոչ ֆունկցիոնալ, հաճախ կողպված լաբորատորիաներ, համակարգչային կաբինետներ, որոնք անհասանելի էին սովորողներին, պատռված քարտեզներ, ուսումնանյութական բազայի

քաղց և, որ ամենակարևորն է՝ չմոտիվացված, նորարարություններից անտեղյակ, ոչ կոմպետենտ մանկավարժական համակազմ: Այսօր խնդիր է դրված՝ լուծելու այս հիմնախնդիրները, որոնք ուղիղ նշանակետի տակ են առել մատաղ սերնդի՝ որակյալ, աջակցող կրթություն ստանալու իրավունքը: Անշուշտ, նշյալ հիմնախնդիրները լուծելու համար անհրաժեշտ են ահռելի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ծով համբերություն, կարողունակ կադրեր, իրական աշխատող, մտավոր ներուժով, նորարար և պետական քաղաքականության բովանդակությունն անվերապահորեն գիտակցող և ընդունող գործադիր մարմին՝ ի դեմս հաստատության տնօրենի, ով կունենա կառավարչական հմտություններ, չի չարաշահի իր տնօրեն լինելու հանգամանքը, կառաջնորդվի բացառապես օրենքով՝ օգտագործելով այն բոլոր հնարավորությունները, որոնք ընձեռում է պետությունը՝ կրթության ոլորտը հզորացնելու, կայունացնելու և ժամանակի կրթական միտումներին համապատասխանեցնելու համար: Գիտակցելով նշված մարտահրավերների հաղթահարման կարևորությունը՝ ընդառաջ ենք գնում որակյալ, աջակցող, մասնակցային և ներառական ուսումնական միջավայրի ապահովմանն ուղղված մեր պետության ջանքերին՝ ի դեմս ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029 թթ. զարգացման ծրագրի, որտեղ մանրակրկտորեն ներկայացրել ենք դպրոցը հզորացնելու մեր տեսլականը: Մեր կողմից իրականացվել են ահռելի նախապատրաստական աշխատանքներ, մինչ բուն ծրագրի վրա աշխատելը, որոնց նպատակն էր համակողմանի ուսումնասիրել դպրոցի ներկայիս իրավիճակը, վեր հանել առկա հիմնախնդիրները, պարզել, թե ինչի արդյունքում են առաջացել նշյալ հիմնախնդիրները և ինչպիսի ելքեր կարելի է առաջադրել դրանց արդյունավետ լուծման նպատակով: Անմասն չենք մնացել նաև կրթական գործընթացի բոլոր մասնակիցների հետ արդյունավետ զրույցներից, սոցիալացումներից՝ նպատակ ունենալով հավաքել հնարավորինս իրատեսական և չափելի քանակական և որակակական տվյալներ: Ուսումնասիրել ենք ուսումնադաստիարակչական գործընթացին առնչվող մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ արձանագրություններ, հաշվետվություններ, 3 ուստարիների կտրվածքով դպրոցի ՆԴՎ տվյալները: Մանրակրկտորեն ուսումնասիրել ենք նաև դպրոցի ֆիզիկական վիճակը, արձանագրել

ենթասակառուցվածքների՝ սահմանված չափանիշներին առկա անհամապատասխանությունները, գույքագրել կարիքները:

Հիմնվելով նշյալ նախապատրաստական աշխատանքների արդյունքում վեր հանված կարիքների, հիմնախնդիրների, բացթողումների, առավելությունների, ուժեղ և թույլ կողմերի վրա՝ վերլուծել ենք դպրոցի՝ ներկայիս վիճակը մի շարք ենթաառողջություններում, սահմանել առաջնային նպատակներ, դրանց իրագործման համար առաջադրել ենք խնդիրներ, երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողություններ, դրանց ի կատար ածման համար անհրաժեշտ միջոցներ: Կարևոր ենք համարել նաև հաշվի առնել սահմանված գործողությունների իրականացմանը խոչընդոտող հնարավոր ռիսկերը, փորձել սահմանել դրանց չեզոքացման հնարավորությունները: Այսպիսով, մեր հետազոտությունն իրականացրել ենք ներքոբերյալ մեթոդներով.

- Սոցիոլոգիական հարցում¹
- Փորձագիտական հացում²
- Հանրակրթության ոլորտի օրենսդրության և փաստաթղթերի վերլուծություն³
- Քանակական և որակական հետազոտություն⁴

Մեր մանկավարժական գործունեության գաղափարական առաջնորդը ամերիկացի փիլիսոփա, հոգեբան և մանկավարժ Ջոն Դյուին է, ով դեռևս 20-րդ դարասկզբին ասել է. «Խոսքեր պետք չեն, մի բան արա»: Ամբողջապես և անվերապահորեն կիսում ենք այս փիլիսոփայությունը՝ պնդելով, որ որակյալ կրթություն ունենալու համար պետք է անել, սովորել, համագործակցել, օգնել, պրպտել, չվախենալ, սովորեցնել, նպատակադրվել, չհանձնվել, իրագործել, հորինել, բացահայտել, ստեղծել, հետազոտել, նախաձեռնել, սիրել, ոգևորել, մոտիվացնել, խրախուսել, գործել, առաջ նայել...

¹Սոց. հարցումներ ենք իրականացրել ծնողական խորհրդի շրջանում:
² Փորձագիտական հարցումներ ենք իրականացրել հաստատության մանկավարժական և վարչական աշխատողների շրջանում:
³ Անհրաժեշտության դեպքում հղում ենք կատարել ոլորտի օրենսդրությանը:/տե՛ս տողատակում/
⁴ Քանակական տվյալները ներկայացված են աղյուսակների և դիագրամների տեսքով, որակական տվյալները՝ երկայուն աղյուսակների միջոցով:

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տարոն 4 թաղամասի կենտրոնական մասում է գտնվում աղյուսակերտ մի կառույց, որը քաղաքի բնակիչները լավ են ճանաչում՝ N 27 դպրոցն է, վայր, որտեղ իր մանկությունն ու պատանեկությունն են թողել արդեն հասուն, գիտակից, հաջողակ ու կայացած բազմաթիվ շրջանավարտներ:

Դպրոցը կառուցվել է 1988 թվականի երկրաշարժից հետո՝ 1991 թվականին: Դպրոցի կառուցման գործում իրենց ուժն ու եռանդը են ներդրել ուկրաինացի շինարարները: Կարճ ժամանակամիջոցում պատրաստ էր տիպային մի շենք, որն ուներ ժամանակակից դպրոցին հատուկ հարմարություններ՝ կաբինետներ, սպորտային ենթակառուցվածքներ, հանդիսությունների դահլիճ, ընդարձակ դասասենյակներ, գրադարան, ճաշարան, արհեստանոց, գործում էր կաթսայատուն, որն առ այսօր ապահովում է շուրջօրյա ջերմություն:

2009թ.-ին կատարվել է դպրոցի անվանափոխություն՝ ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ:

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ



Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը	«Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
ՀՎՀՀ	06909448
Հանրակրթական ուսումնական հաստատության հասցեն	Հայաստան, Լոռու մարզ, Վանաձոր, Տարոն-4,

	Զեյթունի փողոց 3/4
Փոստային դասիչ	2023
Դպրոցի ստեղծման ամսաթիվը	1991
Հանրակրթական ուսումնական հաստատության ինտերնետային կայքի հասցեն	http://27school.am/
Հանրակրթական ուսումնական հաստատության էլ. փոստի հասցեն	vanadzor27@schools.am
Հանրակրթական ուսումնական հաստատության հեռախոսահամարը	032260179
Հանրակրթական ուսումնական հաստատության պետական ռեգիստրում գրանցման համարը	26.210.02101
Պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը	13.07.2010
Հանրակրթական ուսումնական հաստատության շինության բնութագիրը	տիպային
Հանրակրթական ուսումնական հաստատության հարկայնությունը	երկհարկանի
Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի	հիմնական
Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի	տարրական/1-4/, հիմնական/5-9/
Հանրակրթական լիցենզիայով սահմանված աշակերտների թիվը	850
Աշխատանքային շաբաթը	հնգօրյա
Աշխատանքային ռեժիմը	միաձեռք
Շինության ջրամատակարարումը	շուրջօրյակենտրոնացված
Շինության կոյուղացումը	կենտրոնացված/բարվոք/
Զեռուցման ձևը(վառելիքի տեսակը)	լոկալ-գազ
Զեռուցումը	կենտրոնացված
Կենտրոնացված ջեռուցման տեսակը	կաթսայատուն
Շենքի ընդհանուր մակերեսը, մ ²	15226.00
Շենքի ներսի մաքրվող մակերեսը, մ ²	7627.00
Դպրոցին կից մաքրվող տարածքի մակերեսը, մ ²	7420.00
Դպրոցին կից մշակվող մակերեսը/այգի/, մ ²	960.00
Դպրոցը համայնքի տարածքում միակն է	ոչ
Հեռավորությունը ամենամոտ դպրոցից/մոտակա բանուկ ճանապարհով, կմ-ով/	0.10

ՄԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ





ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ



Գոյություն ունեն տեղեկատվության հավաքագրման և մշակման մի շարք մեթոդներ: Սույն ենթաբաժնում մեր առջև խնդիր է դրված համակողմանիորեն ուսումնասիրել դպրոցում առկա իրավիճակը, վեր հանել հնարավոր ուժեղ և թույլ կողմերը, ուստի և նշյալ ուսումնասիրությունն իրականացրել ենք հետազոտության՝ որակական և քանակական մեթոդներով:

- Քանակական տվյալները միշտ թվերով են ներկայացվում: Դրանց մշակման և վերլուծության միջոցով կարելի է վեր հանել վիճակագրական տվյալներ ուսումնասիրվող օբյեկտի վերաբերյալ:
- Որակական տվյալներն ընդհանրական կերպով նկարագրում են իրավիճակը: Դրանք հիմնված են տարբեր տեղեկությունների վրա, այդ թվում՝ մշտադիտարկումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, հարցումներ:



Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վերլուծությունը



Ցանկացած աշխատանքի արդյունքը բնութագրվում է այդ աշխատանքի քանակով և որակով, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել աշխատանքի կատարման արդյունավետությունը:

Ուսումնադաստիարակչական գործընթացում մանկավարժական աշխատանքի արդյունավետության հիմնական չափանիշը սովորողների կողմից գիտության առաջատար գաղափարների յուրացումն ու կիրառումն է՝ հիմնված ստեղծագործական,

քննական մտածողության զարգացման վրա: Դասի արդյունավետության հիմնական ցուցանիշներն են ուսումնական գործընթացի կատարելագործումը, սովորողների սովորելու կարողունակությունը և ուսուցչի մասնագիտական հմտությունների բարձրացումը, վերջնարդյունքում որակական և քանակական բարձր արդյունքների առկայությունը: Դասի արդյունավետության մասին են խոսում ոչ միայն տեսական գիտելիքներից սովորողների ստացած բարձր արդյունքները, այլ նաև գործնական հմտությունների, մի շարք առանցքային կոմպետենցիաների զարգացումը: Չէ՞ որ ժամանակակից կրթության տրամաբանության մեջ գիտելիքը ինքնին արժեք չունի, եթե սովորողները չեն կարողանում դրանք օգտագործել տարբեր գործնական գործունեության մեջ: Գիտելիքի կիրառումը միաժամանակ բնութագրում է դրա յուրացման որակը, սովորողների ինտելեկտի զարգացման մակարդակը և նրանց սոցիալական փորձը, ուստի և կոմպետենցիաների, գործնական հմտությունների ու կարողությունների զարգացվածությունը նույնպես կրթության որակի կարևոր ցուցանիշ է: Ի վերջո, դասավանդման ժամանակ կարևոր է, որ յուրաքանչյուր սովորող միշտ կարողանա վերահսկել գիտելիքների ձեռքբերման իր որակը, վերլուծել իր ուսման արդյունքները և օբյեկտիվորեն գնահատել գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացման մակարդակը, իսկ այս ամենը կարողանալու համար հարկավոր է, որ ժամանակակից սովորողն ունենա վերլուծական, քննական, ստեղծագործական մտածողություն, տրամաբանելու, կարծիք, վերաբերմունք հայտնելու ունակություն:

Դասի արդյունավետության մասին խոսելիս կարևոր է անդրադառնալ նաև դաստիարակչական բաղադրիչին: Յուրաքանչյուր դաս պետք է ունենա դաստիարակչական կարևոր ներգործություն սովորողի վրա, ձևավորի մարդկային բարձր որակներ, նպաստի սովորողի անձի ձևավորմանը: Էլ որտե՞ղ, եթե ոչ դպրոցում, կյանքը նոր ճանաչող անհատը պիտի տեսնի ու լսի այն ամենը, ինչը շատ դեպքերում վարագուրվում է ընտանիքում՝ լավ ու վատ, բարոյականություն- անբարոյականություն, ճիշտ ու սխալ, կարելի ու չի կարելի:

Այսպիսով, կրթության որակի և ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության մասին փաստող մեր կողմից առանձնացված ցուցիչների վրա

հիմնվելով՝ փորձենք մեր մանրադիտակի տակ առնել Լոռու մարզի «Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները:

Աղյուսակ 1.Ընդհանրացված տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ ըստ կրթական աստիճանների

Ցուցանիշ	2020-2021 ուստարի		2021-2022 ուստարի		2022-2023 ուստարի	
	1-ից 4-րդ դաս	5-ից 9-րդ դաս	1-ից 4-րդ դաս	5-ից 9-րդ դաս	1-ից 4-րդ դաս	5-ից 9-րդ դաս
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը /9», «10» տարեկան միջին գնահատական /	68 33,1%	50 16,6%	67 32,7%	42 14,1%	56 21,9%	50 15,9%
Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը / 4», «5» և «6»տարեկան միջին գնահատական /	75 36,5%	175 58,3%	77 37,6%	179 60,3%	68 26,9%	185 58,7%

Վերը բերված աղյուսակում տեսնում ենք ընդհանրացված տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ՝ ըստ կրթական աստիճանների՝ վերաբերող նախորդ երեք ուստարիներին: Սովորողների գերազանցության վերաբերյալ ցուցանիշներում նկատելի է անկում: Եթե 2020-2021 ուստարում 1-ից 4-րդ դասարաններում գերազանց առաջադիմություն ունեցող սովորողների թիվը կազմում էր 68 (33,1%), ապա արդեն 2022-2023 ուստարում՝ 56 սովորող (21.9%): Նշյալ արդյունքը բավականին մտահոգիչ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը տարրական դպրոցի մասին է, իսկ այստեղ, որպես կանոն, սովորողներից շատերն ունենում են

բավարար չափով ուսումնական մոտիվացիա, ծնողներն առավել հետևողականորեն են համագործակցում դպրոցի հետ: Պատկերն առավել խոստումնալից է միջին դպրոցի պարագայում: Եթե 2021-2022 թվականին գրանցվել է գերազանցությամբ սովորողների թվի նկատելի անկում (14.1%), արդեն 2022-2023 ուստարում 2020-2021 ուստարվա ցուցանիշը՝ գերազանց առաջադիմություն ունեցող 50 սովորող, վերականգնվել է:

Ընդհանուր առմամբ՝ գերազանց առաջադիմություն ունեցող սովորողների թիվը նկատելիորեն մեծ է հենց տարրական դպրոցում: Ի համեմատ դրա՝ միջին դպրոցում նկատելիորեն մեծ է ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը, համապատասխանաբար՝ 2020-2021 ուստարի՝ 50-ը 175-ի դիմաց, 2021-2022 ուստարի՝ 42-ը 179-ի դիմաց և 2022-2023 ուստարի՝ 50-ը 185-ի դիմաց:

Աղյուսակի ընդհանրական վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ հատկապես միջին դպրոցում, պայմանավորված մի շարք հանգամանքներով, սովորողներն ունեն ցածր առաջադիմություն, լրջագույն խնդիրներ են առկա ուսումնական մոտիվացիայիև սովորողների առանձնահատկուկ կարիքների հիման վրա ուսումնական գործընթաց ապահովելու տեսանկյունից: Վերլուծությունների այս փուլում կոժվարանանք հստակ պատճառներ մատնանշել, ուստի դրանց վերաբերյալ ամբողջական անդրադարձ կկատարենք սույն ենթագլխի վերջում:

Ստորև դիտարկենք 2020-2021 ուստարվա տվյալները՝ վերաբերող 4-րդ և 9-րդ դասարաններում սովորողների ուսումնառության արդյունքներին:

Աղյուսակ 2. 2020-2021 ուստարվա տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Տարեկան միջին գնահատականները՝ ըստ հիմնական առարկաների		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միջին միավորները	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.
Հայոցլեզու, Մայրենի	72	68	8,1	6,5	8,1	14,0
Գրականություն		68		6,6		13,8
Մաթեմատիկա	72		7,7		7,7	12,4
Հանրահաշիվ		68		6,4		
Երկրաչափություն		68		6,4		
Ռուսաց լեզու	72	68	7,2	7,0		13,8
Անգլերեն	72	68	7,1	6,6		16,7
Ես և շրջ. աշխ.	72		8,1			
Հայաստանի աշխ.		68		6,6		12,9
Հայոց պատմություն		68		7,0		13,9
Համաշխ. պատմ.		68		7,0		
Հայ. եկպատմ.		68		7,7		
Հասարակագիտ.		68		7,4		
Ինֆորմատիկա		68		7,5		
Ֆիզիկա		68		6,6		
Քիմիա		68		6,8		
Կենսաբանություն		68		7,0		
ՆՁՊ և անվ. կենս.		68		8,6		
Երաժշտություն	72		8,5			
Կերպարվեստ	72		8,1			
Տեխնոլոգիա	72		8,7			
Ֆիզկուլտուրա	72	68	7,4	8,9		
Շախմատ	72		7,5			
Ընդամենը	720	1156	78,4	113,7	15,8	144,4

Հիմնական առարկաներից ստացված տարեկան միջին գնահատականների ընդհանուր միավորային ցուցանիշը 4-րդ դասարանում 78.4 է, 9-րդ դասարանում՝ 113.7: 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միջին միավորների ընդհանրական ցուցանիշը հետևյալն է՝ համապատասխանաբար 15.8 և 144.4: Ի նկատի առնենք սույն ցուցանիշները՝ հաջորդիվ դրական դինամիկան արձանագրելու համար: Դիտարկենք նաև 2021-2022

ուստարվա տվյալները՝ վերաբերող 4-րդ և 9-րդ դասարաններում սովորողների ուսումնառության արդյունքներին:

Աղյուսակ 3. 2021-2022 ուստարվա տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Տարեկան միջին գնահատականները՝ ըստ հիմնական առարկաների		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միջին միավորները	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.
Հայոց լեզու	72	50	7,6	6,2	7,7	13,8
Մայրենի		50		6,3		7
Գրակ.		50		6,3		7
Մաթեմատիկա	72		7,4		8	13
Հանրահ.		50		5,8		
Երկրաչ.		50		5,9		
Ռուսաց լ.	72	50	7,4	6,4		6,7
Անգլ.	72	50	7,1	6		8,3
Ես և շրջ. Աշխ.	72		8,2			
Հայ.աշխ.		50		6,1		13,1
Հայոց պատմ.		50		6,7		7
Համաշխ.պատմ		50		6,8		
Հայ.եկ պատմ.		50		7,5		
Հասարակ.		50		7		
ԲՆՖորմ.		50		7,2		
Ֆիզիկա.		50		6,3		15,6
Քիմիա		50		6,3		
Կենսաբ.		50		6,6		15,25
ՆԶՊեանվ.կենս.		50		8,2		
Երաժշ.	72		8,6			
Կերպար.	72		8,2			
Տեխնոլոգիա	72		8,8			
Ֆիզկուլտ.	72	50	8,8	8,9		9,3
Շախմատ	72		7,6			
Ընդամենը	720	850	79,7	114,2	15,7	109,1

4-րդ դասարանում հիմնական առարկաներից ստացված տարեկան միջին գնահատականները հիմնականում բարձր են «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Երաժշտություն», «Ես և շրջակա աշխարհ», «Կերպարվեստ» ուսումնական առարկաներից, համապատասխանաբար՝ 8.8, 8.8, 8.6, 8.2: Նկատելիորեն չեն բավարարում մայրենիի և մաթեմատիկայի ցուցանիշները՝ 7.6 և 7.4 միավոր, նաև՝ ռուսաց լեզվի և անգլերենի արդյունքները՝ 7.4 և 7.1 միավոր: ԱՆշուշտ, բոլոր ուսումնական առարկաներն էլ իրենց կարևորությունն ունեն կրտսեր դպրոցականի համակողմանի զարգացման համար, և որևէ կերպ չի կարելի ստորադասել ֆիզիկական կրթությունը, մշակութային կարողունակության զարգացումը կամ տեխնոլոգիայից ստացված գիտելիքներն արհեստի և արվեստի մասին, այդուամենայնիվ, իրենց կարևորագույն դերն ունի նաև մայրենիի և մաթեմատիկայի արդյունավետ ուսուցումը, որոնց հիման վրա հաջորդիվ պետք է կառուցվի հայոց լեզվի, գրականության, հանրահաշվի և երկրաչափության արդյունավետ ուսուցման գործընթացը:


Ցածր որակի և քանակի գիտելիքներով ու կարողունակություններով արդեն միջին դպրոցում սովորողն ունենում է լրջագույն դժվարություններ, չի կարողանում ապահովել ներառարկայական կապեր, և վերջինիս գիտելիքների ու կարողությունների բուրգը ամուր ու կայուն չի կարելի անվանել: Նույնը կարելի է ասել օտար լեզուների ուսուցման մասին: Այսպիսով, նշյալ առարկաների ցածր միավորները խոսում են այն մասին, որ ուսման մեջ դժվարություններ ունեցող կրտսեր դպրոցականների մոտ լիարժեք չի ձևավորվում լեզվամտածողությունը, հաղորդակցական հմտությունները, փափուկ և կոշտ հմտությունները, տրամաբանական, վերլուծական, քննական, մաթեմատիկական, ստեղծագործական և վերլուծական մտածողությունը, ինչի հետևանքով էլ արդեն միջին դպրոցում անկում է ապրում ուսումնական մոտիվացիան, աշխատունակությունը:

Նշյալ պնդումը հիմնավորելու համար դիտարկենք 9-րդ դասարանում հիմնական առարկաներից ստացված տարեկան միջին գնահատականները: Այստեղ բարձր միավորներ տեսանելի են միայն ՆԶՊ-ից և ֆիզկուլտուրայից՝ 8.2, 8.9: Մյուս հիմնական առարկաներից միավորային ցուցանիշները տատանվում են 5.8-ից 7.5-ի միջակայքում:


Անդրադառնալով 2021-2022 ուստարում 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միջին

միավորներին՝ նկատենք, որ առավել դրական պատկեր ունենք 4-րդ դասարանում՝ մաթեմատիկայի միջին միավորը 8 է, մայրենիինը՝ 7.7: Իսկ ահա 9-րդ դասարանում նվազագույն միավորը 7-ն է, առավելագույնը՝ 15.25-ը: Ստորև բերված գծապատկերներում դիտարկենք գերազանց և ցածր առաջադիմությամբ սովորողների քանակը %-ներով:

Գծապատկեր 1. Գերազանց առաջադիմությամբ սովորողների տոկոսը՝ ըստ նախորդ 3 ուստարիների:



Գծապատկեր 2. Ցածր առաջադիմությամբ սովորողների տոկոսը՝ ըստ նախորդ 3 ուստարիների:



Պարզելու համար, թե արդյոք 2022-2023 ուստարվա ընթացքում գրանցվել է ցուցանիշների դրական դինամիկա, փորձենք դիտարկել հաջորդ աղյուսակը:

Աղյուսակ 4. 2022-2023 ուստարվա տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ:

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Տարեկան միջին գնահատականները՝ ըստ հիմնական առարկաների		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միջին միավորները	
	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	4-րդ դաս.	9-րդ. դաս.	4-րդ. դաս	9-րդ. դաս.
Հայոցլեզու Մայրենի	59	62	7,3	6,6	7,8	13,4
Գրակ.		62		6,9		14,9
Մաթեմատիկա	59		6,9		7,6	13,8
Հանրահ.		62		6,4		
Երկրաչ.		62		6,3		
Ռուսաց լ.	59	62	7,2	6,9		13,6
Անգլ.	59	62	6,9	6,7		16,0
Ես և շրջ. աշխ.	59		7,6			
Հայ.աշխ.		62		7,0		13,5
Հայոց պատմ.		62		7,0		14,4
Համաշխ.պատմ		62		7,6		
Հայ.եկ պատմ.		62		7,9		
Հասարակ.		62		7,5		
ԻՆՖորմ.		62		7,1		
Ֆիզիկա		62		6,9		16,6
Քիմիա		62		6,5		17,6
Կենսաբ.		62		7,2		14
ՆԶՊևանվ.կենս.		62		9,0		
Երաժշ.	59		8,6			
Կերպար.	59		8,2			
Տեխնոլ.	59		8,8			
Ֆիզկուլտ	59	62	8,8	9,0		9,3
Շախմատ	59		7,4			
Ընդամենը	590	1054	77,7	122,5	15,4	148,7

Ի համեմատ 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների՝ 2022-2023 ուստարում 4-րդ դասարանում նվազել են մաթեմատիկայի և մայրենիի միջին գնահատականները: Օտար լեզուների պարագայում փոփոխություններն այդքան էլ նշանակալի չեն:

Աղյուսակ 5. 2020-2021, 2021-2022 և 2022-2023 ուստարիների «Մաթեմատիկա», «Մայրենի», «Ռուսաց լեզու» և «Անգլերեն» ուսումնական առարկաներիի միջին գնահատականները

Տարեկան գնահատականները	միջին	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Մայրենի		8.1	7.4	7.3
Մաթեմատիկա		7.7	7.6	6.9
Ռուսաց լեզու		7.2	7.4	7.2
Անգլերեն		7.1	7.1	6.9

Ցուցանիշների տատանում է նկատվում նաև 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման միավորների պարագայում: Մաթեմատիկայի պարագայում 8 միավորը դարձել է 7.6, իսկ մայրենիի դեպքում՝ 7.7 միավորը դարձել է 7.8: Ըստ էության նվազման միտումն առավել ակնհայտ է այս պարագայում:

2022-2023 ուստարում 9-րդ դասարանում ըստ հիմնական առարկաների տարեկան միջին գնահատականները ընդհանուր միավորը 114,2-ից դարձել է 122,5, իսկ պետական ավարտական քննությունների միջին միավորներն, ընդհանուր վերցրած, 109.1-ից դարձել են 148.7: Այս պարագայում դրական միտումն ակնհայտ է, ինչը խոսում է այն մասին, որ կարողունակահեն կրթական միջավայրն իր որոշակի դրական ազդեցությունը բերել է սովորողների ուսումնական մոտիվացիայի և առաջադիմության դինամիկայի վրա:


ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից 2022թ. դպրոցում իրականացվել է ստուգում՝ դպրոցի կրթական գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով: Դասավորումների, գրավոր աշխատանքների և նույն սովորողների նախորդ տարվա կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների միջին արդյունքները՝ ըստ առարկաների, դիտարկենք ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 6. Գնահատման միջին արդյունքներ՝ ըստ առարկաների և բնութագրիչների

	Հայոց լեզու	Մաթեմատիկա
Ուսուցիչների գնահատման միջին արդյունքներ	2.7 «Լավ»	2 «Բավարար»
Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքներ	5.8 «Բավարար»	4.0 «Բավարար»
Նախորդ ուսումնական տարվա կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների արդյունքներ	6.2 «Բավարար»	5.8 «Բավարար»


Ստորև բերված գծապատկերում /տե'ս գծապատկեր 3./ ներկայացնենք ստուգման ընթացքում սովորողներին հայոց լեզվից տրված գրավոր աշխատանքների տոկոսային արդյունքներ՝ ըստ դասարանների: Ինչպես երևում է գծապատկերից, սովորողների 40 %-ից ավելին նշված երկու դասարաններում էլ գրանցել են «լավ» և «գերազանց» արդյունքներ, ինչը բավականին խոստումնալից է, սակայն միաժամանակ առկա են նաև «անբավարար» և «բավարար» արդյունքներ, որոնք գալիս են փաստելու, որ հայոց լեզվի դասավանդման գործընթացն ունի բարելավման անհրաժեշտություն:

Գծապատկեր 3. Ստուգման ընթացքում սովորողներին տրված գրավոր աշխատանքների տոկոսային արդյունքներ՝ ըստ դասարանների: / Հայոց լեզու/



Դիտարկենք նաև ստուգման ընթացքում 6-րդ և 9-րդ դասարանների սովորողներին մաթեմատիկայից տրված գրավոր աշխատանքների տոկոսային արդյունքներ՝ ըստ դասարանների/տե'ս գծապատկեր 4/:

Գծապատկեր 4. Ստուգման ընթացքում սովորողներին տրված գրավոր աշխատանքների տոկոսային արդյունքներ՝ ըստ դասարանների:/ Մաթեմատիկա/



Մաթեմատիկայից սովորողների «անբավարար» արդյունքները, որոնք 6-րդ դասարանում կազմում է 30.6%, իսկ 9-րդ դասարանում՝ 58.7%, վկայում են այն մասին, որ մաթեմատիկայի դասավանդման գործընթացն արդյունավետ չի իրականացվում, առկա են լրջագույն բացթողումներ, ուսումնական այս առարկայի ուսուցման և ուսումնառության գործընթացը դպրեցում ունի բարելավման խիստ անհրաժեշտություն:

ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների շրջանակներում իրականացվել են նաև դասալսումներ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են.

ա/Ուսումնական նպաստավոր միջավայրը


Գծապատկեր 5-ից պարզ է դառնում, որ «Հայոց լեզու» ուսումնական առարկայի դասերին ուսումնական միջավայրի ապահովման միջին գնահատականը կազմել է 3,1 /լավ/, իսկ մաթեմատիկայի դասերին՝ 3/լավ/ միավոր: Երկու առարկաների դեպքում էլ համեմատաբար ցածր են գնահատվել «դասարանի կահավորանք», իսկ մաթեմատիկայի պարագայում՝ նաև «դասաժամի և դասարանի կառավարում» բնութագրիչները: Հայոց լեզվի ուսուցիչների շրջանում ուսուցման ընթացքում ՏՀՏ

իմացության ու կիրառման միջին գնահատականը կազմել է 1.7 «բավարար», իսկ մաթեմատիկայի ուսուցիչների պարագայում՝ 2.5 «լավ» միավոր: Ընդհանուր առմամբ, ուսումնական միջավայրի ապահովման միջին գնահատականը կազմում է 3.1 «լավ» միավոր:

Դասալսողների կողմից ներկայացված հիմքերն ու եզրակացությունները, մեթոդական աջակցության ուղղությունները վկայում են, այն մասին, որ, չնայած դպրոցը հնարավոր ամեն բան անում է ուսուցման և ուսումնառության գործընթացների համար նպաստավոր միջավայր ապահովելու համար, սակայն առկա են մի շարք խնդիրներ՝ վերաբերող դասարանի կահավորանքին, ուսումնանյութական բազայի անհամապատասխանությանն ու բացակայությանը, ուսուցիչների կողմից ՏՀՏ գործիքների կիրառման արդյունավետությանը, հաղորդակցական մշակույթին, դասաժամի կառավարմանը:

Նկատենք, որ նշյալ հիմնախնդիրների լուծումը կարող է դրական ազդել ուսուցման և ուսումնառության գործընթացների արդյունավետության բարձրացման վրա:

Գծապատկեր 5. Ուսումնական միջավայրի գնահատման միջին արդյունքները՝ ըստ առարկաների և բնութագրիչների:




բ/ Դասավանդման գործընթացը

Գծապատկեր 6-ում տեսնում ենք, որ հայոց լեզվի դասավանդման գործընթացը գնահատվել է 2.9 «լավ», իսկ մաթեմատիկայի դասավանդման գործընթացը՝ 2.6 «լավ» միավոր: Որպես գնահատման դրական հիմքեր՝ դասախոսներն արձանագրել են, որ որոշ դասերի ընթացքում ուսուցիչները աջակցում և ուղղորդում են սովորողներին, փորձում են ապահովել սովորողների համաչափ մասնակցելիություն՝ օգտագործելով ուսուցման ժամանակակից հնարներ և մեթոդներ, գնահատման տարբեր գործիքներ: Միաժամանակ արձանագրել են նաև առկա բացթողումները, մասնավորապես՝ հայոց լեզվի դասերի ընթացքում ուսուցման մեթոդների ոչ արդյունավետ կիրառում, հետադարձ կապի բացակայություն, գնահատման ժամանակակից ձևերի անտեսում:

Մաթեմատիկայի դասերին կիրառվում են հիմնականում ուսուցման ավանդական մեթոդներ, ընկալման ստուգումը իրականացվում է մակերեսային, չի շեշտվում սովորողների առաջընթացը, խրախուսման մեթոդներ չեն կիրառվում, գնահատականները չեն հիմնավորվում, շեշտը դրվում է միայն սկադեմիական գիտելիքների վրա, անտեսվում է գործնական հմտությունների ձևավորումը: Ընդհանուր առմամբ՝ դասի ամրապնդման, ամփոփման փուլերն ու հետադարձ կապի ապահովման ուղղություններն ունեն բարելավելու անհրաժեշտություն:


Գծապատկեր 6. Դասավանդման գործընթացի գնահատման միջին արդյունքներ՝ ըստ առարկաների և բնութագրիչների:



գ/Սովորողների կարողունակությունների ձևավորումը:

Գծապատկեր 7-ից պարզ է դառնում, որ ուսուցման գործընթացում սովորողների կարողունակությունների ձևավորման աշխատանքները մասամբ են համապատասխանում չափորոշչային պահանջներին: Դրական է համարվել որոշ ուսուցիչների կողմից սովորողների քննադատական մտածողության, ստեղծագործելու կարողությունների ձևավորմանն ուզարգացմանը միտված մանկավարժական աշխատանքը, անհատական և խմբային աշխատանքների կատարումը, սովորողների ինքնուրույնության և համագործակցության խթանումը: Արձանագրվել են նաև բացթողումներ, մասնավորապես՝ հայոց լեզվի դասերին հիմնականում ոչ բոլոր սովորողներն են ունեցել սեփական կարծիքը հայտնելու հնարավորություն, համագործակցային արդյունավետ միջավայր չի ապահովվել, քննադատական ստեղծագործական մտածողության, ինքնուրույնության և համագործակցության ձևավորմանն ուղղված ռազմավարություններ մասամբ են կիրառվել: Որոշ դեպքերում մաթեմատիկայի դասին չի տրվել քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնող, վերլուծություն պահանջող խնդիրներ ու առաջադրանքներ, չեն պահանջվել հիմնավորված պատասխաններ:

Գծապատկեր 7. Ուսուցիչների կողմից սովորողների կարողունակությունների ձևավորման մոտեցումների գնահատման արդյունքներ ըստ առարկաների և բնութագրիչների:



Այսպիսով, սովորողների կարողունակությունների ձևավորմանը միտված մոտեցումների գնահատման միջին արդյունքը հայոց լեզվի ուսուցիչների շրջանում ավելի բարձր է՝ 3 «լավ»՝ ի համեմատ մաթեմատիկայի ուսուցիչների 1.9 «բավարար»:

Անշուշտ, կարևոր է, որ դասագործընթացին հնարավորինս մեծ ուշադրություն դարձվի նաև սովորողների դաստիարակությանը, սոցիալականացմանը, ներկայացման և կազմակերպչական հմտությունների ձևավորմանը, անձանոթ միջավայրում իրենց դրսևորելու հմտությունների ձևավորմանը: Այդ ամենի համար մեծ նշանակություն ունեն առարկայական օլիմպիադաներին, մարզական, մշակութի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին մասնակցությունը, տարբեր խնդրահարույց թեմաների շուրջ քննարկումները, հոգեբանի, դասղեկների կողմից անցկացվող բացատրական և ճանաչողական զրույցները: Ստորև բերված աղյուսակում դիտարկենք վերը բերված աշխատանքների քանակական տվյալները:

Աղյուսակ 7. Տվյալներ մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակութի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ:

	2020-2021	2021-2022	2022-2023
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը հաստատության սովորողների ընդհանուր թվին	8 աշ 1,38%	5 աշ 0,9%	7 աշ 2,7%
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը	1աշ 12,5%	1աշ 20%	2 աշ 28,6%
Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողներին ընդհանուր թվի համեմատ	0 աշ. 0%	0 աշ. 0%	0 աշ. 0%
Մարզային և հանրապետական սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ	8աշ. 1,3%	19աշ. 3,32%	20աշ. 3,5%
Միջազգային սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթներին մրցանակների ստացած սովորողների թիվը և տոկոսը	1աշ. 12,5%	0աշ. 0%	0աշ. 0%

Աղյուսակից պարզ է դառնում, որ առարկայական օլիմպիադաների, սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթներին սովորողների մասնակցությունը խիստ նվազ է և այս համատեքստում ևս հարկավոր է իրազեկողական, մոտիվացիոն, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ իրականացնել՝ բացահայտելու սովորողների հետաքրքրությունները և խթանելու դրանց զարգացմանը: Անդրադառնալով 2023-2024 ուստարվան՝ ստորև բերված աղյուսակում դիտարկենք անբավարար գնահատականներ ունեցող սովորողների վերաբերյալ տվյալներ:

Աղյուսակ 8. 2023-2024 ուստարվա ընթացքում 2-րդ, 5-րդ, 7-րդ դաս. անբավարար գնահատականներ ունեցող սովորողների մասին:

Հ/հ	Աշ. Ազգանուն, անուն	Դաս.	Առարկա	Դասավանդող ուսուցիչ
1	Ասրյան Խաչիկ	5բ	Անգլերեն	Լ. Սադյան
2	Դուրյան Գարիկ			
3	Կոստանդյան Դավիթ			
4	Քալաշյան Հրաչ			
5	Պապոյան Ռաֆաել	5բ	Բնություն	Ա. Զուրաբյան
6	Բաղդասարյան Արգիշտի	7գ	Հանրահաշիվ	Ա. Թեմուրյան
7	Փարվանյան Մարիամ		Երկրաչափություն	
8	Շաքարյան Անի		Երկրաչափություն	
9	Պապոյան Ադելինա		Երկրաչափություն	
10	Սարգսյան Նարեկ	7բ	Երկրաչափություն	Ա. Խաչատրյան
11	Մուրադյան Ալեքս	7ա	Երկրաչափություն	Ա. Թեմուրյան
12	Հակոբյան Նարեկ		Անգլերեն	Լ. Սադյան

Աղյուսակ 9. 2023-2024 ուստարվա ընթացքում անբավարար գնահատականներ ունեցող սովորողների համար իրականացված երկարօրյա ուսուցման մասին տվյալներ:

Դաս	Առարկա	Աշ. քանակը	Պարապոդուսուցիչը	Հատկացվող շաբաթա կան ժամաքանակը	Ընդհանուր ժամա քանակ
Դաս.	Առարկա	Անբավարար գնահ. ստացած աշ. քանակը	Երկարօրյա խմբակ պարապոդ ուսուցիչը	Հատկացվող շաբաթական ժամաքանակը	Պարապած ժամերի քանակը
5	Անգլերեն	4	Լ. Սադյան	2	5
	Բնություն	1	Ա. Ղազարյան	1	2
7	Երկրաչ	6	Ա. Խաչատրյան	1	2
	Հանր	1	Ա. Խաչատրյան	1	2
	Անգլերեն	1	Լ. Սադյան	1	3

Նոր չափորոշչի պահանջներին ընդառաջ գնալով՝ հաստատությունում գործում են նաև ուսումնական խմբակներ, որոնք միտված են մի շարք կարողունակությունների զարգացմանը, սովորողների աշխարհայացքի ձևավորմանն ու մտահորիզոնի ընդլայնմանը:

Աղյուսակ 10. Խմբակների մասին տեղեկատվություն 2023-2024 ուստարվա համար

N	Խմբակի անվանումը	Դաս.	Ժամաքանակը	Աշակերտների քանակը
1	Շախմատը որպես մտածողության զարգացման գործիք	2	2	13
2	Հայկական ժողովրդական պար	2	2	23
3	Գրական-թատերական խմբակ	5	2	15
4	Հմուտ ձեռքեր	5	2	13
5	Ասմունք	7	2	9
6	Բանավեճի ակումբ	8	1	15
7	Նորարար ջերմատուն	9	2	22
8	Առողջ ապրելակերպ	5ա	1	31
9	Առողջ ապրելակերպ	5բ	1	31
10	Առողջ ապրելակերպ	7ա	1	35
11	Առողջ ապրելակերպ	7բ	1	19
12	Առողջ ապրելակերպ	7գ	1	22
13	Armat հնժեներական լաբորատորիա	5ա	2	11
14	Armat հնժեներական լաբորատորիա	5բ, 6բ, 6գ	2	12
15	Armat հնժեներական լաբորատորիա	6ա, 7, 8, 9	2	16


Անշուշտ, դպրոցը մեծ ուշադրություն է դարձնում նաև ներառական և մասնակցային միջավայրի ապահովմանը: Դպրոցում իրականացվում է ներառական կրթություն՝ ապահովելով հաստատության կողմից հաստատված պետական չափորոշիչներն ու առարկայական ծրագրերը՝ փորձելով հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի կարիքները և հնարավորությունները: Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

Դպրոցն ունի մեծ պոտենցիալ կրթության առանձնահատուկ կարիքներով երեխաների համար ուսումնական հարմար պայմաններ ապահովելու համար: Այս համատեքստում կարևոր է արդյունավետ և շարունակական համագործակցության ապահովումը ուսուցիչների, ուսուցչի օգնականի, հոգեբանի, ԿԱՊԿ ունեցող երեխայի ծնողի և ՏՄԱԿ-ի հմապատասխան աշխատակիցների /սոցմանկավարժ, հատուկ մանկավարժ, լոգոպեդ/ միջև: Հենց նշյալ սուբյեկտների շարունակական համագործակցության արդյունքում է հնարավոր կատարելագործել ու բարելավել ներառական միջավայրը դպրոցում, նպաստել ԿԱՊԿ ունեցող երեխայի ուսումնառության արդյունավետության բարձրացմանն ու սոցիալիզացիայի խթանմանը:

Աղյուսակ 11. ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը տվյալ և նախորդ 2 ուստարիների համար:

<i>Ուստարի</i>	<i>2021-2022</i>	<i>2022-2023</i>	<i>2023-2024</i>	<i>Աճ, նվազում</i>
<i>1-ին կիսամյակի սկիզբ</i>	<i>13</i>	<i>16</i>	<i>9</i>	<i>-4,-7</i>
<i>Ծանր</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>1 /III աստիճան/</i>	<i>-1,-2</i>
<i>Միջին</i>	<i>9</i>	<i>10</i>	<i>5/II աստիճան/</i>	<i>-4,-5</i>
<i>Թեթև</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>3 /I աստիճան/</i>	<i>+1, պահպանվել է</i>
<i>2-րդ կիսամյակի սկիզբ</i>	<i>17</i>	<i>18</i>	<i>17</i>	<i>պահպանվել է, -1</i>
<i>ծանր</i>	<i>3</i>	<i>3</i>	<i>2/III աստիճան/</i>	<i>-1,-1</i>
<i>միջին</i>	<i>11</i>	<i>12</i>	<i>7/II աստիճան/</i>	<i>-4,-5</i>
<i>Թեթև</i>	<i>3</i>	<i>3</i>	<i>8 /I աստիճան/</i>	<i>+5,+5</i>

Գծապատկեր 8. ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը սվյալ և նախորդ 2 ուստարիների համար ըստ կրթական կարիքի:



Աղյուսակ 12. Տվյալներ հաստատությունում ներառական կրթության իրականացման վերաբերյալ:

Ցուցանիշ	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Ռեսուրս-սենյակ այցելող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը (ԿԱՊԿ ունեցող) և տոկոսը (Հաշվարկ. Ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ)	16 100%	17 100%	18 100%
Ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թիվը և տոկոսը (Հաշվարկ. Ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ)	16 100%	17 100%	18 100%
Հաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (Հաշվարկ. ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ, սովորողների թիվը և տոկոսը հաշվարկել ըստ հաշմանդամության և կարիքների տիպերի)	16 2,77%	17 2,97%	18 3,17%
Հաստատությունից դուրս եկած (ուսումն անավարտ թողած) ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը (Հաշվարկ. Հաստատությունից հեռացած/ուսումն անավարտ թողած ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ)	0 0%	0 0%	1 6,5%
Արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը և տոկոսը (Հաշվարկ. արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտ-մբ)	16 100%	17 100%	18 100%
Դպրոցի աշակերտական խորհրդում ԿԱՊԿ ունեցող սովորող. թիվը	2	1	2

Աղյուսակից պարզ է դառնում, որ դպրոցում հնարավորինս բարձր են ցուցանիշները ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ներառական և մասնակցային միջավայր ապահովելու տեսանկյունից, ինչը խոսում է այն մասին, որ հանրակրթական դասարանում նշյալ սովորողները չունեն օտարման, խտրականության ենթարկման խնդիրներ, ավելին՝ ներգրավված են նաև աշխտհրդի կազմում և արդյունավետ մասնակցում են ներդպրոցական կյանքին ևս:

Անշուշտ, ուսումնական գործընթացում շարունակական հաջողություններ ունենալու համար բավարար չէ, որ սովորողը այս կամ այն առարկայից ուսումնական տարվա որոշ հատվածում կամ կոնկրետ առարկայի ուսումնառության, թեմայի ուսումնասիրության ընթացքում ունենա ժամանակավոր հաջողություններ: Ինչպես յուրաքանչյուր թեմա ներառարկայական կապով կապված է նախորդին, այդպես էլ որոշակի դասարանում ստացած գիտելիքը, հմտությունն ու կարողությունը հենք է, հաջորդ դասարանում դրանք կատարելագործելու և խորացնելու համար: Դպրոցում անցած երեք տարիների ուսումնադաստիարակչական գործընթացի ուսումնասիրությունը թույլ տվեց մեզ վեր հանել մի շարք առավելություններ ու թերություններ, որոնք առավել կանխատեսելի և չափելի կարող են դարձնել ուսուցման և ուսումնառության գործընթացի հետգա պլանավորումը: Արձանագրեցինք, որ սովորողների գերազանցության մակարդակը կարիք ունի բարձրացման և քանակական ցուցանիշները հատկապես ռիսկային են միջին դպրոցում: Ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման, մասնակցային միջավայրի, սովորողների ինքնուրույնության ապահովման մասով առկա են խնդիրներ, բազմաթիվ դեպքերում դասի կառուցվածքային տարրերը հստակ չեն մատնանշվել, նոր նյութի հաղորդման, ամրապնդման և ամփոփման փուլերում արդյունավետ ուսուցման մեթոդներ, ՏՀՏ-ներ, գնահատման ժամանակակից մեթոդներ չեն կիրառվել, գերակշռող դեր են ունեցել պասիվ, ավանդական մեթոդների կիրառությունը, ինչն էլ իր արտացոլումն է գտել քանակական ցուցանիշներում: Նմանօրինակ ուսումնական պայմաններում ավելորդ է խոսել աշխատունակության, ուսումնական մոտիվացիայի բարձրացման մասին, ուստի կարևոր է, որ հստակ սահմանվեն հիմնախնդիրներ, դրանցից բխեն նպատակներ ու գործողություններ՝ սխալներից ու բացթողումներից դասեր քաղելու, նշյալ որակական ու քանակական ցուցանիշները բարելավելու համար:

Հատկապես ներկայիս մարտահրավերային և վտանգներով լի աշխարհում կարևոր է նաև սովորողների մեջ ձևավորել սեփական իրավունքները պաշտպանելու, պարտավորությունների նկատմամբ պատասխանատվություն կրելու կարողություններ: Մարդասիրության, ժողովրդավարության, բարեվարքության մասին սովորողն անընդհատ պետք է լսի և լսածին պետք է հավատա՝ կոնկրետ օրինակների հետ առնչվելով: Այս նպատակով ուսումնական հաստատությունում պարբերաբար կազմակերպվել են դաստիարակչական և ճանաչողական բնույթի միջոցառումներ, դաս-միջոցառումներ, հանդեսներ, ոչ ֆորմալ դասեր, էքսկուրսիաներ և այլեր: Կարևոր ենք համարում, որ մանկավարժական աշխատողները սովորողների մեջ ձևավորեն բարոյական և հասարակության համար ընդունելի վարքագիծ, ամեն կերպ իրազեկեն սովորողներին վնասակար սովորությունների, օտարման, բուլինգի, խտրականության կործանարար հետևանքների մասին, սովորողին պատժելիս որևէ կերպ չվիրավորեն նրա պատիվն ու արժանապատվությունը, այլ գործեն մանկավարժական էթիկայի և օրենքի սահմաններում: Արձանագրենք, որ դաստիարակությունը սովորողին պարզապես չպետք է ստիպելով և ստիպելով ուղեկցվող գործընթաց չէ: Դաստիարակությունը սեր է, աջակցություն, հոգատարություն, մոտիվացիա, ուստի կարևոր է, որ հենց նմանօրինակ ուսումնական միջավայր ապահովվի սովորողների համար, որտեղ նրանք կունենան հավասար մասնակցելիություն ուսումնական գործընթացին, ներդրողական կյանքին, կլինեն իրավագիտակից, պաշտպանված, կհարգեն և կպաշտպանեն նաև դասընկերների իրավունքները, կհամագործակցեն կրթական գործընթացի բոլոր մասնակիցների հետ:



Դիտարկենք մի քանի առանքային հիմնախնդիրներ, որոնց լուծումը մեզ համար առաջնահերթություն ենք դիտարկում.

- Դպրոցում մեծացնել խմբակների թիվը, այդ թվում՝ սպորտային, մշակութային, արհեստագործական, տեխնոլոգիական, ստեղծել երգչախումբ:
- Երկարօրյա ուսուցմամբ ապահովել այնպիսի կրթության որակ, որ սովորողները կարիք չունենան մասնակցելու տարատեսակ դասապատրաստումների:

- Ուշադրության կենտրոնում պահել և զարգացնել սովորողների մասնագիտական կողմնորոշման հիմնահարցը՝ նրանց որպես կամավորներ ընդգրկելով տարբեր աշխատանքների մեջ:
- Տարբեր սոցիալական նախաձեռնությունների միջոցով բարձրացնել սովորողների ուսումնական մոտիվացիան, ապահովել համագործակցություն տարբեր կրթօջախների, մշակութային և սպորտային հաստատությունների հետ:
- Սովորողների համար դպրոցը դարձնել կրթության, զարգացման, հանգստի, սոցիալականացման համար հարմարավետ վայր:

Ստորև փորձենք ամբողջացնել ուսումնադաստիարակչական գործընթացի քանակական և որակական ուսումնասիրության արդյունքում վեր հանված ուժեղ և թույլ կողմերը.

ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅՆ ԿՈՂՄԵՐ
Մանկավարժական աշխատողների մի մասը տիրապետում է ուսումնադաստիարակչական աշխատանքը ներկայիս բարեփոխումներին համահունչ պլանավորելու և վարելու գործընթացին, այդ թվում՝ վարում է ակտիվ մեթոդներով դասեր, ընթացիկ գնահատումն իրականացնում է և՛ միավորային, և՛ ձևավորող գնահատմամբ, կիրառում է ՏՀՏ գործիքներ:	Սովորողների առաջադիմությունը կայուն զարգացման կարիք ունի, գերազանցության մակարդակը ցածր է թե՛ կրտսեր, թե՛ միջին դպրոցում:
Սովորողները մասնակցում են օլիմպիադաների:	Սովորողների շրջանում նկատվում է ուսումնական մոտիվացիայի պակաս:
Անց են կացվում սովորողների կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր:	Որոշ սովորողներ ունեն կարգապահական խնդիրներ:
Սովորողների ուսումնական մոտիվացիան խթանելու համար հաստատությունում պարբերաբար կազմակերպվում են դաստիարակչական և ճանաչողական բնույթի	Ուսուցիչների մի մասը դժվարություններ ունի ուսուցման ժամանակակից մեթոդների ընտրության և կիրառման հարցերում:

<p>միջոցառումներ, դաս-միջոցառումներ, հանդեսներ, ոչ ֆորմալ դասեր, էքսկուրսիաներ և այլն:</p>	
<p>Մովորողների որոշ մասն ունի ուսումնական բարձր մոտիվացիա, համագործակցում է ուսուցիչների հետ:</p>	<p>Ուսուցիչների մի մասը դժվարություններ ունի գնահատման ժամանակակից ձևերի կիրառման հարցերում:</p>
<p>Դպրոցն ունի համագործակցություն մի շարք կրթական և մշակութային կառույցների հետ:</p>	<p>Ուսուցիչների մի մասը դժվարություններ ունի ուսումնական նախագծերի պլանավորման և անցկացման հարցերում:</p>
<p>Տեսչական մարմնի, ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից հաճախակի իրականացվում են ստուգումներ, դպրոցին տրամադրվում է խորհրդակցական աջակցություն:</p>	<p>Ուսուցիչների մի մասը դժվարություններ ունի ՏՀՏ գործիքների կիրառման հարցերում:</p>
	<p>Ներդպրոցական վերահսկողության արդյունավետ իրականացման համար առկա չէ մանկավարժական համակազմի լիարժեք համագործակցություն:</p>



Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծությունը



4	Պապյան Գագիկ Վազգենի	26.03.59	ուսուցիչ	ՆԶՊ	-	30	4	gagik.papyan.59@mail.ru	8040
5	Աբուլյան Սամվել Վազգիֆի	05.02.69	ուսուցիչ	Ֆիզկուլտ	I	35	22	aculyansamve294@gmail.com	8041
6	Ալավերդյան Էլլադա Արմենի	02.02.2000	Ուսուցիչ	Ֆիզկուլտ	-	1	11	Alaverdyan_ellada@mail.ru	93384

Աղյուսակ 20. Տեղեկություններ հումանիտար առարկաների մեթոդական միավորման կազմի, կրթական աշխատանքային տվյալների մասին

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան ամսաթիվ	Պաշտոն	Դասավանդած ասարկա	Տարակարգ	Աշխատանքային ստաժ	Դասավանդած ժամերի քանակ	Էլեկտրոնային հասցե	Teams-ի կոդ
1	Մելքոնյան Լիլիթ Ջալալի	28.07.75	Մ/մ նախ. ուսուցիչ	Հայոց լ., գր	-	26	22	Lilit-melkonyan75@mail.ru	6864
2	Մալուխյան Սյուզաննա Միքայելի	11.12.78	ՄԿԱԳ, ուսուցիչ	Հայոց լ., գր.	-	22,5ս մ	7	malumyan78@mail.ru	6858
3	Ղուկասյան Մեդա Ալբերտի	04.12.79	ուսուցիչ	Պատմ., Հաս	-	20	27	sedaghuk79@mail.ru	8647
4	Ղուկասյան Անի Աշոտի	13.01.63	ուսուցիչ	Պատմ.	-	5սմի ս	14	anixukasyan1993@mail.ru	5004
5	Եղիկյան Գայանե Էդիկի	03.03.96	ուսուցիչ	ՀԵՊ	-	25	11	gayane.yeghikyan69@gmail.com	5002
6	Ղալաչյան Ժաննա Վլադիմիրի	20.06.74	Ուսուցիչ	Հայոց լ., գր.	I	27	27	janna.R@mail.ru	6865
7	Ավետիքյան Իվետա Լորայրի	08.03.86	Ուսուցիչ	Հայոց լ., գր.	-	-	7	Iveta.60@mail.ru	8649
8	Միմոնյան Վարդուհի Ավետիսի	09.08.86	Ուսուցիչ	Հայոց լ., գր.	-	5սմի ս	14	vardsimonyan1986@gmail.com	8699
9	Սադյան Լեյլի Իշխանի	03.02.59	Ուսուցիչ	Անգլերեն	-	38	22	Leylisadyan@gmail.com	6852
10	Պետրոսյան Քրիստինե Գևորգի	23.09.85	Ուսուցիչ	Անգլերեն	-	16	18	liverkris33@gmail.com	8645
11	Շաքարյան Քրիստինե Միշայի	16.10.76	Ուսուցիչ	Անգլերեն	-	21տ.1 Յսմ	4	christine.hayarpi@gmail.com	8643
12	Հովհաննիսյան Մարինե Ռաֆիկի	07.02.61	Ուսուցիչ	Անգլերեն	-	29	18	marine.hovhannisyan61@mail.com	8039
13	Հայրապետյան Հասմիկ Միխայիլի	19.11.59	Ուսուցիչ	Անգլերեն	-	43տ.6 սմ	15	hayrapetyanhasmik439@gmail.com	6861
14	Հովանեսովա Վալենտինա Վարդանի	21.04.63	Ուսուցիչ	Անգլերեն	-	38	5	valentinahovanesova@gmail.com	6851
15	Պետրոսյան Լուսինե Հայկունու	09.05.90	Ուսուցիչ	Անգլերեն	-	11տ2 սմ	14	petrosyan.luss@yandex.ru	8646

Աղյուսակ 21. Տեղեկություններ տարրական առարկաների մեթոդական միավորման կազմի, կրթական աշխատանքային տվյալների մասին:

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան ամսաթիվ	Պաշտոն	Դասավանդած արվեստ	Տարակարգ	Աշխատանքային ստաժ	Դասավանդած ժամերի քանակ	Էլեկտրոնային հասցե	Teams-ի կոդ
1	Հարությունյան Շուշան Ալբերտի	23.07.71	Մ/մ նախ. դասավար	դասավար	-	30տ.	20ժ.		13183
2	Պետրոսյան Մանուշակ Սուրենի	15.03.58	դասավար	դասավար	-	48տ.	20ժ.	manushpetrosyan15@gmail.com	6846
3	Արամյան Ալվարդ Ռադիկի	15.06.68	դասավար	դասավար	-		20ժ.	aalvard67@gmail.com	5001
4	Մարտիրոսյան ԱրմինեԺորայի	05.07.67	դասավար	դասավար	-	56տ.	19ժ.	armine67martirosyan@gmail.com	6859
5	Վարդույան Արմինե Գերասի	31.12.64	դասավար	դասավար	-	35տ.	18ժ.	arminevardumyan87@gmail.com	13185
6	Սարգսյան Ալինա Գառնիկի	25.09.72	դասավար	դասավար	-	29տ.	18ժ.	alinaharutyunyan358@gmail.com	6856
7	Մարաբյան Ալիսա Իոսիֆի	09.02.67	դասավար	դասավար	-	39տ.	18ժ.	alisamarabyan17@gmail.com	6860
8	Սարգսյան Ելենա Աշոտի	30.09.82	դասավար	դասավար	-	7տ.	18ժ.	elenasargsyan2015@gmail.com	10753
9	Փիլոյան Արթուր Ալբերտի	02.05.66	ուսուցիչ	Շախմատ	-	5տ.	9ժ.	arturpiloyan@mail.ru	8644

Նկատենք, որ դպրոցում մեթոդական միավորումների աշխատանքներին ուսուցիչների հիմնական մասը մասնակցություն ունենում է՝ հանդես գալով մեթոդական զեկուցումներով, հետազոտություններով նախաձեռնություններով: Այդուամենայնիվ նշյալ 4 առարկայական մասնախմբերն իրենց ողջ ռեսուրսն ու ներուժը չեն կիրառում, որպեսզի ձևավորվի մասնակցային միջավայր, արդյունավետ փորձի փոխանակում, համագործակցություն: Մարմնի դերը դպրոցում ունի արժևորման կարիք, ինչը հնարավոր է ապահովել աշխատանքի արդյունավետության բարձրացման միջոցով: Կարևոր է, որ մանկավարժները հնարավորություն ունենան՝ շարունակական կերպով կատարելագործելու իրենց մասնագիտական որակները, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ առավել պատասխանատու մոտենան մասնախմբերում իրենց պարտավորությունների կատարմանը: Հատուկ առաջադրանքների կատարման, փոխադարձ գնահատումների, ինքնագնահատման և այլ եղանակների միջոցով պետք է ձևավորել ինքնակրթության, փոխուսուցման, փորձի փոխանակման համար

արդյունավետ պայմաններ: Հանդուրժողական ու բարեվարք մթնոլորտի ապահովման համար կարելի է հաճախակի կիրառել տարբեր մեթոդիկաներ /Մեծ հնգյակ, տագնապի, սթրեսակայունության, ապրումակցման, ագրեսիայի, շփվողականության մակարդակը ուսումնասիրող թեստեր/: Հզորացնելով մեթոդական միավորումների դերը, ապահովելով անդամների համաչափ մասնակցելիությունը, համագործակցության և փոխօգնության համար նպաստավոր պայմաններ ստեղծելով՝ կարելի է նպաստել կրթության որակի բարձրացմանը:

Ուսուցիչները մեթոդական միավորումներում իրենց աշխատանքը պետք է կատարեն ամենայն պատասխանատվությամբ, իսկ դրա համար կարևոր է, նաև վերահսկողության արդյունավետ իրականացումը: Նիստերի օրակարգերը պետք է իրական լինեն, ընդունված որոշումները պետք է ի կատար ածվեն, միայն այս կերպ է հնարավոր դիմակայել ժամանակակից կրթական մարտահրավերներին:

Ստորև դիտարկենք մեթոդմիավորումների գործունեության ուժեղ և թույլ կողմերը.

ՈՒՃԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Հաստատության առարկայական մասնախմբերը սահմանված կարգով իրականացնում են նիստեր, իրենց լիազորությունների սահմաններում քննարկումներ են իրականացնում, կատարում են այլ աշխատանքներ:	Առարկայական մասնախմբերի որոշ անդամներ անտարբեր են մասնագիտական շարունակական զարգացմանը, դժվար են համագործակցում գործընկերների հետ:
Առարկայական մասնախմբերի որոշ անդամներ մշտապես համագործակցում են գործընկերների հետ, հանդես գալիս զեկուցումներով, ուսուցչական նախագծերով:	Առարկայական մասնախմբերի օրակարգից հաճախ դուրս են մնում ուսուցիչների մասնագիտական զարգացման համար առաջնային կարևորության թեմաների ուսումնասիրությունը, դրանց շուրջ փորձարկումներ չեն իրականացվում:
Մեթոդմիավորումների անդամներն իրականացնում են փոխադարձ	Որոշ անդամներ խուսափում են կրթական նորարարություններից,

դասալսումներ, քննարկում և ամփոփում արդյունքները:	լիարժեքորեն չեն իրականացնում իրենց թղթավարությունը:
Մահմանվում են առարկայական ամիսներ, իրականացվում են դաս- միջոցառումներ, ուսումնական նախագծեր:	Կարիք կա առարկայական մասնախմբերի աշխատանքների վերահսկողության առավել արդյունավետ մեխանիզմների ներդրման:
Առարկայական մասնախմբերի անդամներն անցկացնում են ինտեգրված դասեր, միջոցառումներ, ուսումնական նախագծեր:	Առարկայական մասնախմբերի անդամներից ոմանք ունեն կազմակերպչական, համագործակցային հմտությունների պակաս, փոխօգնության միջավայրը կարիք ունի բարելավման:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Ժամանակակից սովորողների համար դպրոցական կյանքն ակտիվ սոցիալականացման շրջան է: Սովորողի դրական սոցիալականացումից է կախված ոչ միայն նրա անձի ձևավորումն ու զարգացումը, այլ նաև դպրոցում որոշակի մշակութային և գործունեության միջավայրի ձևավորումը: Ժամանակակից հանրակրթության նպատակը սոցիալապես կայուն անհատականության ձևավորումն է, որը կարող է շոշափելի ներդրում ունենալ նոր սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում հասարակության վերափոխման և զարգացման գործում, ունակ լինի ինքնակատարելագործման, ունենա սոցիալական և քաղաքացիական բարձր պատասխանատվություն: Այս համատեքստում դպրոցում առանցքային դերակատարում ունի աշակերտական խորհուրդը: Նշյալ մարմինն օգնում է սովորողներին համակարգել իրենց մտավոր, ստեղծագործական, կազմակերպչական

ներուժը, արդյունավետ կիրառել իրենց գիտելիքները, հմտություններն ու կարողությունները՝ ի շահ ներդարացական կյանքի աշխուժացման, սեփական շահերի պաշտպանության, արատավոր երևութների՝ բռնության, օտարման, խտրականության, ծաղրի բացառման ու կանխարգելման: Մարմնիաշխատանքների շրջանակներում սովորողներն ունեն օրենքով պաշտպանված ինքնավարություն, ազատ են կարծիք, տեսակետ հայտնելու մեջ և կարող են հավակնել ուսումնական հաստատության տնօրենության և մանկավարժական աշխատողների կողմից աջակցության տարբեր ձևերին: Սովորողների ինքնավարության հիմնական նպատակներն ու խնդիրներն ամրագրված են հանրակրթական ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրության մեջ, մասնավորապես.

1. համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը.
2. ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստելը.
3. հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը.
4. սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը.
5. սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը.
6. հաստատության սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը.
7. սովորողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աջակցելը և սովորողների նախաձեռնությունների ապահովմանը օժանդակելը.
8. հաստատությունում սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելը¹¹:

¹¹ՀՀ ԿԳ նախարարի 17 մայիսի 2011 թ. N 571-Ն հրաման:

Լոռու մարզի «Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ևս ԱԽ, օրինակելի կանոնադրության հիման վրա, յուրաքանչյուր ուսումնական տարի ընտրվում է աշխրհրդի նախագահ, ձևավորվում են հանձնախմբեր և աշխատանքներն ուղղորդվում՝ ըստ գործունեության ուղղությունների: Նկատենք, որ ԱԽ անդամների հիմնական մասը ակտիվ է, նախաձեռնող, մասնակցում է հաստատության գործունեությանը, կոլեգիալ կառավարմանը, ունի անմիջականորեն իրենց վերաբերվող հարցերի մասին կարծիքի ազատ արտահատման հնարավորություն: Ստորև բերված աղյուսակում դիտարկենք աշխակերտական խորհրդի կազմը:

Աղյուսակ 22. Աշխրհրդի կազմի վերաբերյալ տեղեկություն 2023-2024 ուստարվա համար:

<i>Նախագահ</i>	<i>Աղաջանյան Մելինե/9բ դաս./</i>					
<i>Քարտուղար</i>	<i>Պապոյան Էթերի/9ա դաս./</i>					
<i>Հանձնախմբեր</i>	<i>Աշակերտների քանակը</i>	<i>Դաս.</i>	<i>6-րդ դաս</i>	<i>7-րդ դաս</i>	<i>8-րդ դաս</i>	<i>9-րդ դաս</i>
<i>Ուսումնադաստիարակչական</i>	6	6-9	4	0	2	0
<i>Մշակութային, կազմակերպչական</i>	11	6-9	1	7	1	2
<i>Էկո</i>	6	6-9	2	0	2	2
<i>Մպորտի և ռազմամարզական</i>	8	6-9	2	2	1	3
	31		9	9	6	7

Նկատենք, որ սովորողների մեջ մեծ ոգևորություն է նկատվում՝ ինքնուրույն միջոցառումներ, նախագծեր իրականացնելու տեսանկյունից: Այդուհանդերձ, որոշ դեպքերում առկա է որոշակի հմտությունների, այդ թվում՝ կառավարչական, կազմակերպչական, ներկայացման, հաղորդակցական, բացակայություն, ինչի արդյունքում խորհուրդն ունենում է որոշակի դժվարություններ: Ընդհանուր առմամբ՝ խորհուրդը զարգացման շրջափուլում է, սովորողների հիմնական մասն ունի մոտիվացիա՝ համագործակցության շրջանակների ընդլայնման, տարբեր հիմնախնդիրների բարձրաձայնման, առաջարկությունների ներկայացման հարցերում:

Աղյուսակ 23. Դպրոց հաճախող աշակերտների թվի վերաբերյալ տեղեկատվություն 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի սկզբի դրությամբ

Ընդհանուր թիվը	580
Աղջիկ	293
Տղա	287

Աղյուսակ 24. Աշխրհրդի կողմից կազմակերպված միջոցառումները՝ վերջին 3 ուստարիների ընթացքում:

Միջոցառում	Տարի	Մասնակից սովորողների թիվը	Համադպրոցական կամ դասարանային
«Կյանքդ կյանքիս համար, կյանքս՝ կյանքի գնով»	2021	174	7ա,բ,8ա,բ,9ա,բ դաս.
Դասարանների ամանորյա ձևավորման մրցույթ	2021	571	Համադպրոցական
Գրքերի հավաքագրում գիրք նվիրելու օրվան նվիրված	2021	571	Համադպրոցական
Մոմավառություն Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված	2022	297	Համադպրոցական
Երեխաների պաշտպանության օրվան նվիրված կավճանկարչություն	2022	274	Համադպրոցական
«Հավերժի ճամփորդը» թեմայով վերջին դաս	2022	50	9ա,9բ դաս.
Մասնակցություն Խաչվերաց տոնին: Այց Սուրբ Նարեկացի եկեղեցի:	2022	124	8-9 դաս.
Մասնակցություն Տեր Վահանի անցկացրած սեմինարին «Հայ ժողովրդի լինել չլինելու հարցը» թեմայով	2022	62	9ա,9բ դաս.
Աշխրհրդի նախագահի ընտրության կազմակերպում:	2022	243	6-9 դաս.
Սպորտլանդիա	2022	62	8ա,8բ դաս.
Դպրոցի ամանորյա ձևավորում:	2022		Աշխրհուրդ
Միջոցառում՝ գիրք նվիրելու օրվա կացապցությամբ	2023	574	1-9 դաս
Սպորտլանդիա	2023	48	7ա,7բ
Սպորտլանդիա	2023	54	5ա,բ

Աղյուսակից պարզ է դառնում, որ անցկացվող միջոցառումները միօրինակ են, սակավաթիվ: Կարծում ենք՝ այստեղ կարևոր է նաև մանկավարժական աշխատողների խորհրդատվական աջակցության դերը՝ միջոցառումների ձևաչափերի և ուղղվածության արդյունավետ ընտրման հարցերում: Սովորողների գործունեությունը պետք է լինի բազմաբևեռ, առավել ակտիվ, նրանք պետք է դառնան կուռ ամբողջություն, կատարեն հետազոտություններ, հարցախույզեր, մշտադիտարկումներ, վեր հանեն հիմնախնդիրներ, առաջադրեն լուծման ելքեր, ուղիներ: Այսպես կարելի է զարգացնել սովորողների սոցիալական հմտությունները, ձևավորել կայուն, դիրքորոշում ունեցող, մարտահրավերներին ընդառաջ գնացող քաղաքացիներ: Անշուշտ, խորհուրդը պետք է նախաձեռնի և իրականացնի մշակութային, սպորտային, բնապահպանական, անվտանգային, առողջապահական, համայնքային նշանակության միջոցառումներ նույնպես: Ամենակարևորն այն է, որ խորհրդի ինքնավարությունը չլինի հորինված, այլ սովորողը վստահ լինի, որ իր նախաձեռնած միջոցառումը, նախագիծը, ծրագիրը, ուշադրության է արժանանալու, քննարկվելու է, վեր են հանվելու ուժեղ և թույլ կողմերը: Այս հետևողականությունն ու ուշադրությունը ունակ է ստեղծել ոգևորություն, նպաստել մոտիվացիայի բարձրացմանը: Դասերի ավարտին սովորողը չպետք է տուն շտապի, կարևոր է պայմաններ ստեղծել, որ վերջինս սիրի դպրոցը, ցանկանա կատարել հասարակական, կամավորական աշխատանքներ, մտահոգվի իր համայնքի, իր դպրոցի, իր դասարանի հիմնախնդիրներով: Այս մթնոլորտն կարելի է ունենալ առաջին հերթին դպրոց-աշակերտ հավասար, բարեվարք, աջակցող համագործակցության պարագայում, որտեղ մեկնարկային քայլը, անշուշտ, դպրոցը պետք է կատարի:

Ստորև փորձենք ընդհանրացնել հաստատության աշակերտական խորհրդի աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Աշակերտական խորհուրդը սահմանված կարգով իրականացնում է նիստեր, քննարկում հաստատության համար առաջնային նշանակության հարցեր, մասնակցում ներդպրոցական կյանքին:	Աշակերտական խորհուրդը չի օգտագործում իր ողջ ներուժը, նկատվում է պասիվություն, կազմակերպչական հմտությունների պակաս:

<p>Աշակերտական խորհուրդը հիմնականում նախաձեռնություններով հանդես է գալիս, կազմակերպում է միջոցառումներ, քննարկումներ, էքսկուրսիաներ:</p>	<p>Աշակերտական խորհուրդը լիարժեքորեն չի համագործակցում մյուս խորհրդակցական մարմինների, շահառու կազմակերպությունների հետ:</p>
<p>Աշակերտական խորհուրդն ունի համագործակցության եզրեր համայնքի, շահառու կազմակերպությունների հետ:</p>	<p>Աշակերտական խորհրդի անդամների շրջանում կարիք կա սոցիալական, կազմակերպչական, հաղորդակցական հմտությունների զարգացման:</p>
<p>Խորհուրդը դպրոցում իրականացնում է հարցախույզեր, վեր հանում աշակերտական համայնքի հիմնախնդիրները, ներկայացնում տնօրենությանը:</p>	<p>Դպրոցում խորհրդի դերը կարիք ունի արժևորելու, առավել մեծ մասշտաբի նախաձեռնություններում խորհրդին ներգրավելու:</p>
<p>Խորհուրդը կազմում է թուուցիկներ՝ վերաբերող բուլինգին, կոնֆլիկտի կառավարմանը, մասնագիտական կողմներոշմանը և այլն:</p>	<p>Խորհրդի ինքնավարությունը լիարժեքորեն չի իրացվում:</p>

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Ուսումնական հաստատության սովորողի ծնողների հետ համագործակցության կազմակերպման և համակարգման գործառույթը պատկանում է ուսումնական հաստատությունների մանկավարժական համակազմին՝ տնօրենի գլխավորությամբ: Ժամանակակից աշխարհում դպրոց-ընտանիք փոխադարձ կապի

եղանակներն ու մեթոդները պարբերաբար լրամշակվում են՝ կոմունիկացիաների արդի եղանակներին համապատասխանեցման նպատակով: Կիրառվում են թե՛ ավանդական, թե ժամանակակից եղանակներ, որպեսզի ընտանիքի հետ կապը լինի շարունակական և օպերատիվ: Սովորողի համար աջակցող և հասանելի ուսումնառությունն ապահովելու համար շատ կարևոր է, որ կրթական գործընթացի բոլոր մասնակիցներն իմանան իրենց դերերն ու գործառույթները: Որպես կանոն՝ մանկավարժական համակազմն այս մասով հազվադեպ է դժվարություններ ունենում, իսկ ահա ծնողները ոչ միշտ են պարտաճանաչորեն ընդառաջ գնում դպրոցի հետ համագործակցությանը, ներդրոցական կյանքին և հաստատության կառավարմանն իրենց մասնակցության ապահովմանը:

Ժամանակակից կարողունակահեն կրթության պայմաններում ուսուցման գործընթացը հենվում է սովորողի անհատականության վրա, որը, ինչպես գիտենք, սաղմնավորվում է հենց ընտանիքում: Այս համատեքստում առավել հրատապ է դառնում ծնողների հետ անընդմեջ փոխգործակցության ապահովումը, երեխայի ուժեղ և թույլ կողմերի համատեղ վերհանումը, առանձնահատուկ կարիքների բացահայտումն ու բավարարումը: Այդ իսկ պատճառով և՛ ծնողի, և՛ ուսուցչի համար կարևոր է համագործակցություն հաստատել միմյանց հետ: Դպրոց-ընտանիք համագործակցությունը երկարատև աշխատանք է պահանջում, որն իրենից ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բավարարմանը: Երկուստեք կառուցողական համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Այս ամենի համար հարկավոր է, որ սովորողի ծնողը լինի իրավագիտակից, պատասխանատու, ունենա մանկավարժական գիտելիքներ:

Որպես կանոն՝ խնդրահարույց ծնողները անհանդուրժող, ագրեսիվ վարքագիծ դրսևորում են՝ արդարացնելու համար սեփական սխալները: Այդուամենայնիվ, սոցիալ-մանկավարժական ճիշտ և նպատակային աշխատանքի արդյունքում պետք է հասնել նրան, որ համագործակցության հիմքում դրվեն փոխադարձ հարգանքը, առողջ բարոյահոգեբանական միջավայրը, ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը, արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը,

սխալների ընդունումը, վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը, ինքնանդրադարձ կատարելու կարողությունը, հումանիստական մղումները, սեփական շահի ստորադասումը, անձնային բարձր որակների դրսևորումը: Կոնֆլիկտային և մանկավարժորեն անկարողունակ ընտանիքների հետ առավել համակողմանի աշխատանք է հարկավոր՝ բացառելու համար ընտանիքում երեխայի նկատմամբ բռնությունն ու անտարբերությունը: Անապահով կամ այլ խնդիրներով ընտանիքների երեխաներն առավել թիրախային են և առավել շատ է նկատվում կարիքը վերջիններիս ծնողների հետ համագործակցության խորացման: Ուստի և կարևոր է, որ հնարավոր ռիսկերը կանխելու և կյանքի բնականոն զարգացումը ապահովելու համար մանկավարժական բոլոր աշխատողները հոգ տանեն, որպեսզի ծնողը գիտակցաբար մոտենա նաև երեխաների էմոցիոնալ պահանջումների բավարարմանը, ինչպիսիք են՝ սիրո և անվտանգության, նոր փորձի, գովասանքի և գնահատման, պատասխանատվության պահանջումները:

Այսպիսով, կարծում ենք, որ ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքը կարող է նպաստել, որ վերջիններս քաջ գիտակցեն իրենց պարտավորությունները, մասնակցեն իրենց երեխայի ուսումնառության գործընթացին, ինչի արդյունքում շահում է և՛ երեխան, և՛ դպրոցը: «Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով, մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով¹²:

Ծնողական խորհուրդը հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններից մեկն է: Դասարանների ծնողական խորհուրդները՝ նախագահ և երկուսից չորս անդամի կազմով ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ ուսումնական տարվա համար: Հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահը ընտրվում է փակ

¹² «Հանրակրթության մասին», ՀՀ օրենք, հոդված 28:

քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է¹³:

Խորհրդի արդյունավետ աշխատանքի պարագայում դպրոցում ներդպրոցական մի շարք հարցերում ուսուցիչները չեն բախվում դժվարությունների, կոնֆլիկտներն առավել կառավարելի են դառնում, կազմակերպչական հարցերը լուծվում են առանց խոչընդոտների: Խորհրդի քննարկման տիրույթում են հետևյալ հիմնախնդիրները.

- նպաստել հաստատության արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին ծնողների ներգրավվածությունը, աջակցել միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպմանը,
- բացահայտել և կանխարգելել ծնողների, սովորողների շրջանում կոնֆլիկտային իրավիճակները, բուլինգը,
- աջակցել օժտված, ուսման մեջ ետ մնացող, շնորհալի, սոցիալապես անապահով երեխաների կարիքների հանրայնացմանը,
- ծնողների շրջանում անցկացնել հարցախույզեր,
- կազմակերպել քննարկումներ, հանդիպումներ, կլոր սեղաններ՝ ներգրավելով ծնողներին ուսուցիչներին և սովորողներին:

Լոռու մարզի «Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ևս սահմանված կարգով ձևավորվել և գործում է ծնողական խորհուրդ: Խորհուրդը իրավիքում է նիստեր, առաջադրում օրակարգեր և կատարում իրեն լիազորված գործառույթները: Սակայն պետք է նկատել, որ խորհրդակցական այս մարմինը լիարժեքորեն չի իրացնում իր ներուժը, շատ դեպքերում իրավագիտակցության պակասով, պասիվությամբ պայմանավորված ունի ձեռնպահ դիրքորոշում, մինչդեռ խորհրդի ակտիվ ու համագործակցային աշխատանքի արդյունքում դպրոցում կարելի է ձևավորել առավել մասնակցային միջավայր: Շատ դեպքերում ծնողները պասիվ են, չհամագործակցող, անտարբեր, ինչն արտացոլվում է երեխաների վարքի, խնամքի, վարվեցողության մեջ: Այս մասով մեծ դեր ունի դպրոցը, բոլոր մանկավարժական աշխատողները: Հարկավոր է մշտական աշխատանքի արդյունքում առավել ոգևորել ծնողներին, բերել դեպի դպրոց, աջակցել, խորհրդատվություն տրամադրել: Քննվող թեմայի շուրջ դպրոցում իրապես առկա են որոշակի խնդիրներ, որոնք ուղղակիորեն

¹³ ՀՀ Կառավարության 6 հուլիսի 2017 թվականի N 801-Ն որոշում:

վերաբերում են թե՛ մանկավարժական աշխատողների մասնագիտական հմտություններին, նրանց կողմից ծնողների շրջանում իրականացվող սոցիալ-մանկավարժական աշխատանքների արդյունավետությանը, թե՛ ոչ պատասխանատու, կոնֆլիկտային և անտարբեր ծնողների առկայությանը:

Աղյուսակ 25. Ծնողխորհրդի կազմի վերաբերյալ տեղեկություն 2023-2024 ուստարվա համար

Վանաձորի Ղ. Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոցի ծնողական խորհրդի կազմի մասին 2023-2024 ուստարի					
Թիվ	Ծնողական խորհրդի անդամի ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդ ան թիվ	Կրթությունը	Ո՞ր դասարանի ծնողխորհրդի նախագահն է	Աշխատանքի վայրը
1	Բարխուդարովա Քրիստինա	1990	Բարձրագույն	Iա	Չի աշխատում
2	Անդրեասյան Մարիամ	1991	Միջին մասնագիտական	Իբ	Վաճառողուհի
3	Սուքիասյան Ալլա	1992	Բարձրագույն	IIա	Չի աշխատում
4	Մարտիրոսյան Շողիկ	1977	Միջին մասնագիտական	IIբ	Թիվ 27 դպրոցում խոհարարի օգն.
5	Կարապետյան Աննա	1989	Միջնակարգ	IIIա	Չի աշխատում
6	Հախվերդյան Լիլիթ	1991	Միջին մասնագիտական	IIIբ	Չի աշխատում
7	Աֆիցերյան Անուշ	1988	Բարձրագույն	IVա	Չի աշխատում
8	Ստամբուլյան Գոհար	1990	Բարձրագույն	IVբ	Չի աշխատում
9	Ստամբուլցյան Անգին	1983	Բարձրագույն	IVգ	Չի աշխատում
10	Վարդանյան Մելանյա	1985	Միջին մասնագիտական	Vա	Չի աշխատում
11	Ղարազյոզյան Գեղեցիկ	1993	միջնակարգ	Vբ	Չի աշխատում
12	Դավաթյան Լիանա	1984	Բարձրագույն	VIա	ՏՄԱԿ-ում որպես հոգեբան
13	Դունամայան Հայարիփի	1990	Միջին մասնագիտական	VIբ	Չի աշխատում
14	Հարությունյան Արմինե Լևոնի	1987	Բարձրագույն	VIգ	Չի աշխատում
15	Մարության Մարինե	1984	Բարձրագույն	VIա	Չի աշխատում
16	Գևորգյան Անի	1983	Բարձրագույն	VIIբ	Չի աշխատում
17	Հովակիմյան Ռոզա	1991	Միջին մասնագիտական	VIIգ	Չի աշխատում
18	Այվերդյան Թամարա	1988	Բարձրագույն	VIIIա	Վաճառողուհի
19	Պողոսյան Ռուզաննա	1986	Միջին մասնագիտական	VIIIբ	Չի աշխատում
20	Համազասպյան Աննա	1987	Բարձրագույն	IXա	Անհատ ձեռներեց
21	Խաչատրյան Նարինե/դպրոցի ծնողխորհրդի նախագահ/	1988	Բարձրագույն	IXբ	Չի աշխատում

Աղյուսակ 26. Ծնողական խորհրդի կողմից նախորդ 3 ուստարիներին կազմակերպված միջոցառումները՝ հանդեսները, հավաքները, երեկույթները, էքսկուրսիաները, ճանաչողական այցերը և այլն:

Միջոցառումը	Ամսաթիվ	Մասնակիցների ծնողների թիվը և սովորողների տոկոսը	Ծնողական ներդրումների չափը
Կավճանկարչություն	2021-2022 2022-2023	48% 50%	Ապահովել են գունավոր կավիճներով
Սպորտլանդիա	2019-2020	40%	Աշակերտների մասնակցությունը սպորտային միջոցառումներին
Ամանորյա թատերական հանդես	2021-2022 2022-2023	48% 45%	Աշակերտների մասնակցությունը համաքաղաքային միջոցառումներին
Սուրբ ծննդյան միջոցառում	2021-2022 2022-2023	20% 40%	Դահլիճի ձևավորում
Եղեռնին նվիրված ջահերով երթ	2019-2020 2021-2022 2022-2023	40% 50% 50%	Աշակերտների մասնակցությունը միջոցառմանը
Հրաժեշտ այբբենարանին	2019-2020 2021-2022 2022-2023	13% 12% 15%	Դահլիճի ձևավորում
Հրաժեշտ դպրոցին	2020-2021 2021-2022 2022-2023	12 % 8,75 % 1,9%	Դահլիճի ձևավորում
Ավարտական միջոցառումներ	2020-2021 2021-2022 2022-2023	12% 12,5% 10,7%	Դահլիճի ձևավորում
Ճանաչողական էքսկուրսիաներ և արշավներ	2020-2021 2021-2022 2022-2023	577 500 537	Ապահովել են տրանսպորտային միջոցով
Այցելություն քաղաքի, մարզի և հանրապետության պատմամշակութային, տեսարժան վայրեր և թանգարաններ	2020-2021 2021-2022 2022-2023	86,6% 75% 89%	Ճանապարհածախս, սննդի կազմակերպում և գիշերակաց


Բերված աղյուսակից նկատելի է, որ ծնողների կողմից իրականացվող միջոցառումներն ու նախաձեռնությունները չունեն թեմատիկ բազմազանություն, միօրինակ են: Չեն իրականացվել մշակութային, սոցիալական, առողջապահականուղղվածության, կանխարգելիչ և բացատրական նշանակության, համայնքային խնդիրներին վերաբերող, սեռատարիքային, հոգեբանական,

ծնողավարական թեմաներով միջոցառումներ, քննարկումներ, մինչդեռ նկատվում է, որ խորհրդի անդամների հիմնական մասն ունի բարձրագույն մասնագիտական կրթություն և նշյալ ուղղությունները ևս կարելի էր ներառել: Դիտարկենք նաև վերջին երեք ուստարիների ընթացքում ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում ամենաշատ քննարկված հարցերը, որոնց մեջ, ըստ էության կարելի է տեսնել բազմազանություն, սակայն դրանք չեն արտացոլվել գործնական քայլերի տեսքով, ինչպես վերը բերված աղյուսակում արդեն տեսանք:


- Դպրոցի ռեժիմի քննարկում
- Դպրոցական հագուստի հետ կապված հարցերի քննարկում
- Ծնողական խորհրդի ժամանակացույցի հաստատում
- Կարգապահական հարցեր
- Ատեստավորման և խրախուսման ներկայացվող ուսուցիչների վերաբերյալ կարծիքների քննարկում
- Մուսուլմանական դպրոցի քննարկում
- Անապահով, բազմազավակ, ծնողազուրկ, ամուսնալուծված ընտանիքների երեխաների դասագրքերի զեղչման հարցերի քննարկում
- Տոնական օրերի, դպրոցական միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպչական հարցեր

Նշենք, որ ծնողների շրջանում անց ենք կացրել սոցիոլոգիական հարցում, որի արդյունքներն ու դրանց վերլուծությունը դիտարկենք ստորև:


1.2եր երեխայի կրթության իրավունքը լիարժեքորեն իրացվում է:




2.Ձեր երեխան հաճույքով է հաճախում դպրոց:




3.Ձեր երեխան ինքնուրույն է կատարում տնային առաջադրանքները:



4.Ձեր երեխան մանակավարժական աշխատողների կողմից ստանում է մանկավարժահոգեբանական աջակցություն:



5. Ձեր երեխան արդյոք ունի ուսումնական դժվարություններ:



Նկատենք, որ որևէ սովորող կրթության իրացման իրավունքի հետ չունի խնդիրներ: Հաստատությունը ձեռնարկում է բոլոր միջոցառումները՝ նմանօրինակ նախադեպերը կանխելու համար: Ի վերջո, ՀՀ-ի կրթության բնագավառում օրենսդրության խնդիրներից է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը¹⁴»: Հարցված ծնողների գերակշիռ մասի պնդմամբ՝ իրենց երեխաները հաճույքով են հաճախում դպրոց, ինչը խոսում է այն մասին, որ դպրոցում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ: Հարցված ծնողների 52%-ի երեխաներն ինքնուրույն են կատարում տնային առաջադրանքները: Այս համատեքստում պատկերը բարելավելու առումով կարիք կա աշխատանք տանել և՛ ծնողների հետ՝ բացառելու որևէ տեսակի միջամտություն սովորողների ինքնուրույն աշխատանքներին, և՛ ուսումնական գործընթացի վերահսկողական մեխանիզմների արդյունավետության բարձրացման առումով՝ ուսումնական դժվարություններ ունեցող սովորողներին բացահայտելու և այդ ուղղությամբ նպատակային աշխատանք տանելու տեսանկյունից: Այս հարցն առավել հրատապ է դառնում դիտարկելով ծնողների պատասխանն առ այն, որ միայն հարցված ծնողների 63%-ն է պնդել, որ իր երեխան չունի ուսումնական դժվարություններ: Մանկավարժահոգեբանական աջակցություն ստանում է հարցված ծնողների 74%-ի երեխաները: Սա խոսում է այն մասին, որ մանկավարժական աշխատողների շրջանում կարիք կա՝ ուսուցման անհատական սկզբունքի ապահովման, անհատակողմնորոշիչ մեթոդիկաների կիրառման, դաստիարակչական մեթոդների գործադրման հմտությունների զգարգացման:

¹⁴ «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 2:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<p>Ծնողական խորհուրդը սահմանված կարգով իրականացնում է նիստեր, քննարկում հաստատության համար առաջնային նշանակության հարցեր:</p>	<p>Ծնողների շրջանում կան պասիվ, անտարբեր, ծնողավարական ցածր հմտություններով ծնողներ, ովքեր անտարբեր են ներդպրոցական կյանքին և դպրոցի կառավարմանը:</p>
<p>Ծնողական խորհուրդն ունի մեծ պոտենցիալ, անդամների հիմնական մասն ունի բարձրագույն կրթություն, գիտակցական բարձր մակարդակ, պատասխանատվության զգացում:</p>	<p>Ծնողական խորհրդի դերը դպրոցում ունի մեծացման կարիք, շատ դեպքերում ծնողներն իրազեկվածության պակաս ունեն:</p>
<p>Ծնողների հիմնական մասը ակտիվորեն համագործակցում է դպրոցի հետ, ներկայանում ժողովներին, մասնակցում ներդպրոցական անցուդարձին, արտադպրոցական միջոցառումներին</p>	<p>Ծնողական խորհուրդը երբեմն չի կատարում իր լիազորությունները, չի օգտվում իր խորհրդակցական ձայնի իրավունքին:</p>
<p>Խորհուրդը հիմնականում մտահոգ է դպրոցի հիմնախնդիրներով, ծանոթ է իր լիազորություններին ու պարտավորություններին:</p>	<p>Խորհուրդը լիարժեքորեն չի համագործակցում մյուս խորհրդակցական մարմինների, շահառու կազմակերպությունների, համայնքի հետ:</p>
<p>Ծնողխորհրդի համագործակցությունը ծնողական համայնքի հետ հիմնականում արդյունավետ է:</p>	



Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը, ուժեղ կողմերն ու թերությունները



Ժամանակակից դպրոցը այն վայրն է, որտեղ օրվա մեծ մասն են անցկացնում սովորողներն ու մանկավարժական համակազմը: Անշուշտ, աշխատանքային և ուսումնական մոտիվացիան, աշխատունակությունը բարձրացնելու համար շատ կարևոր է, որ հաստատությունը լինի բարեկարգ, հարմարավետ, անվտանգ համալրված լինի ուսումնական և հանգստի ենթակառուցվածքներով, ապահովի սովորողների սնվելու, առաջին բուժոգնություն ստանալու, մարզվելու և այլ առաջնային կարիքները: Կարևոր ու հիմնարար նշանակություն ունի նաև դպրոցի նյութատեխնիկական հագեցվածության հանգամանքը: Առանց դրա, ներկայիս կրթությունը կիսատ է, անարդյունավետ, ոչ լիարժեք: Նշյալ երկու ուղղությունները շատ կարևոր են կայուն զարգացող դպրոց ունենալու համար, ուստի առկա հիմնախնդիրները պահանջում են արդյունավետ և համապարփակ լուծումներ:

Ստորև բերված աղյուսակներում դիտարկենք դպրոցի ֆիզիկական վիճակի և նյութատեխնիկական հագեցվածության վերաբերյալ քանակական և որակական տվյալներ:

Աղյուսակ 27. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար:

Դասարանների թիվը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1 -ին դասարան	2	2	2	հաստատուն
2-րդ դասարան	3	2	2	հաստատուն
3-րդ դասարան	2	3	2	նվազում
4-րդ դասարան	2	2	3	աճ
5-րդ դասարան	3	3	2	նվազում
6-րդ դասարան	2	3	3	հաստատուն
7-րդ դասարան	2	2	3	աճ
8-րդ դասարան	2	2	2	հաստատուն
9-րդ դասարան	2	2	2	հաստատուն
ընդամենը	20	21	21	հաստատուն

Աղյուսակ 28. Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին:

Ցուցանիշ	Տվյալներ
Գրադարանի տարածքը ք.մ-ով	55,6քմ
Ընթերցասարահիասկայությունը նտարածքը քմ-ով	27քմ
Գրադարանում կամ ընթերցասահում նստատեղերի թիվը	15
Գրադարանի գրապահոցի տարածքը քմ-ով	28քմ
Գրադարանում համակարգիչների թիվը	չկա
Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը	չկա
Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, այդ թվում	750
-գեղարվեստական գրքերի թիվը	3050
-տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն)	425
-ուսումնամեթոդական գրքերի թիվը	48
-ամսագրերի թիվը	30
-այլ	146
Գրադարանից միջինում ամսական օգտվողների թիվը	80-100

Աղյուսակ 29. Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ:

Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ	Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները	Ուսումնականության, ուսումնադիդակտիկ նյութերը	Լրացուցիչ, գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը
Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ	Էլեկտրական մեք. Ուժաչափ,	Պաստառներ, դասագրքեր	Նոր չափիչ սարքեր
Քիմիայի լաբորատորիա, կաբինետ	Փորձանոթներ, լվացարան Կոլբա, սալիքոտայրոց	Պարբերական աղյուսակ	Սպիրտայրոց Հայտանյութեր Ալկալիներ Կշեռք՝ կշռաքարերով
Կենսաբանության լաբորատորիա	Հերբարիում, Մարդու օրգանների մոդելներ, պաստառներ	Սկավառակներ Էլ. դասեր	Ցուցանմուշներ
Աշխարհագրության լաբորատորիա, կաբինետ			Համակարգիչ, պրոեկտոր Աշխարհի ֆիզիկական քարտեզ
Պատմության կաբինետ	Քարտեզներ, պաստառներ		Ցուցանմուշներ
Ռազմագիտության կաբինետ	Ուսումնական զենք-զինամթերք	Պաստառներ	Լրացուցիչ զենք
Համակարգչային լաբորատորիա, կաբինետ	Համակարգիչներ, 1 տալիչ սարք, Էլեկտրոնային գրատախտակ	Էլ. դասերի սկավառակներ	Համակարգիչներ, պրոեկցիոն և տալիչ սարքեր
Օտար լեզուների լինգվաֆոնային կաբինետ		Այբբենարան Պաստառներ	Գույք, վերանորոգում կահավորում
Արհեստանոց (նշել ինչպիսի)		Հաստոց, հյուսնի գործիքներ	Վերանորոգում Գույքի թարմեցում
Տեխնոլոգիայի կաբինետ	Խոհանոցի գույք Կարի մեքենաներ	Ասեղ, թել, գոբելեն գործելու սարք, հեյլուն	Նոր գույքի
Էկո դասասենյակ	Մեղաններ, աթոռներ, ծաղկամաններ, կավից, փայտից, թռչնի վանդակ	Ծաղիկներ, ծաղկամաններ	Էկո կրթության վերաբերյալ դպրոցական ծրագրեր, նյութեր
Միջոցառումների դահլիճ	Բեմահարթակ Նստարաններ Բարձրախոսի տակդիր	վարագույրներ	Վերանորոգման, գույքի թարմեցման կարիք, բեմահարթակը լամինատե դարձնելու, դինամիկների, բարձրախոսի
Մարզադահլիճ 1,2	Կահույք, մարզագույքն ամբողջությամբ	Գնդակներ, օղակներ, պարան	2-րդ մարզադահլիճն ունի վերանորոգման, գույքով ապահովման կարիք
Այլ			

Լոռու մարզի «Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հիմնանորոգման կարիք ունի, մի շարք ենթակառուցվածքներում վիճակն անմխիթար է, որոշներում՝ բավարար մակարդակի: Ստորև դիտարկենք հաստատության ֆիզիկական վիճակի և նյութատեխնիկական բազայի նկարագրությունը, արձանագրենք ուժեղ և թույլ կողմերը:

1. Պատուհանները, դռները ենթակա են փոխարինման, ներկայումս դրանք մաշված են և պիտանի չեն շահագործման:
2. Տանիքը հարթ է, ինչի հետևանքով երկար տարիներ անձրևաջրերը ներ են թափանցել դպրոց՝ ամբողջությամբ վնասելով կոսմետիկ հարդարանքն ու հատակը:
3. Չնայած այն հանգամանքի, որ դպրոցի միջանցքներում իրականացվել են ընթացիկ կոսմետիկ հարդարման աշխատանքներ,անձրևաջրերի և ձյան հալոցքից առաջացած ջրերի ներթափանցման հետևանքով ներկայումս միջանցքները ևս անմխիթար վիճակում են:
4. Դպրոցի կաթսայատունը նույնպես ունի վերանորոգման անհրաժեշտություն:
5. Հաստատության սանհանգույցներից միայն 13-ն է վերանորոգված, 7-ը վերանորոգման կարիք ունեն:
6. Դասասենյակները նույնպես վերանորոգման կարիք ունեն, գույքը, գրատախտակները հիմնականում հնամաշ են:
7. Հաստատության գրադարանն ունի վերանորոգման կարիք:
8. Գրքային ֆոնդը թարմացման կարիք ունի, չկան ժամանակակից գեղարվեստական գրքեր, ուսումնասօժանդակ նյութերի քանակը սահմանափակ է, հիմնականում առկա չեն մեթոդական ձեռնարկներ: Գրքային ֆոնդն ունի թվայնացման, համակարգչի ձեռքբերման կարիք:
9. Հաստատության ճաշարանը վերանորոգված է,կահավորված, սովորողները ստանում են տաք սնունդ:
10. Դպրոցն ուն թվով երկու սպորտդահլիճ,որոնցից մեկը գտնվում է անմխիթար վիճակում, գույքը օգտագործման ենթակա չէ:Մյուս սպորտդահլիճը նորակառուց

է, համալրվել է նոր գույքով և մոտ օրերս կհանձնվի շահագործման: Նոր սպորտդահլիճն ունի 3 սանհանգույց և լոգարան:

11. Հաստատությունն ունի թվով երկու միջոցառումների դահլիճ: Հիմնական դահլիճն ունի վերանորոգման, գույքի թարմացման կարիք, չի ջեռուցվում, ինչի պատճառով ձմռան ամիսներին միջոցառումներն անց ենք կացնում միջոցառումների համար նախատեսված փոքրիկ դահլիճում:
12. Հաստատության բուժկետի գույքը թարմացվել է, սակայն կարիք ունի կոսմետիկ վերանորոգման:
13. Հաստատությունն ունի վերանորոգված, թարմացված գույքով, համակարգիչներով, տպասարքով, էլեկտրոնային գրատախտակով հագեցած SMART դասասենյակ:
14. ՆՁՊ-ի կաբինետը համալրված է գույքով, սակայն ունի վերանորոգման կարիք:
15. Հաստատությունն ունի վերանորոգված, գույքով համալրված տեխնոլոգիայի դասասենյակ:
16. Հաստատությունն ունի քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ, որոնք վերանորոգման կարիք ունեն: Սարքավորումներ, նյութեր առկա են, սակայն հիմնական մասը հնամաշ է, ոչ սարգին:
17. ARMAT ինժեներական լաբորատորիան համալրված է գույքով, սակայն ունի վերանորոգման կարիք:
18. Հաստատությունում գործում է վերանորոգված էկո դասասենյակ, որը համալրված է նաև գույքով, բուսականությամբ:
19. Գործում է թարմացված գույքով շախմատի դասասենյակ, որն ունի վերանորոգման կարիք:
20. Հաստատությունն ունի թվով երեք ռեսուրս սենյակ, որոնցից մեկը վերանորոգվածն կահավորված է: Առկա է նաև ԿԱՊԿ ունեցող սովորողներին հարմարեցված սանհանգույց: Մյուս երկու ռեսուրս սենյակներն ունեն վերանորոգման, գույքի թարմացման կարիք:
21. Ջեռուցման համակարգն ամբողջապես չի բավարարում դպրոցի կարիքները:
22. Հաստատությունն ունի պարի դասասենյակ, որն ունի վերանորոգման և գույքի ձեռքբերման կարիք:

23. Հաստատությունն ունի խմբակների սենյակ, որն ունի վերանորոգման և գույքի ձեռքբերման կարիք:
24. Դպրոցի տարածքը մասնակի կանաչապատ է, դպրոցի բակը հարուստ է բուսականությամբ, հարակից տարածքն անվտանգ է, ցանկապատված:
25. Դպրոցի տարածքում հիմնվել է 2 ջերմոց, յուրաքանչյուրը՝ 400 ք/մ: Ջերմոցում աճեցվում է հազար, լոլիկ, վարունգ, ելակ, որոնք, որպես էկոլոգիապես մաքուր սնունդ, օգտագործվում են դպրոցի ճաշարանում: Ջերմոցներում աշակերտներն անց են կացնում գործնական դասեր, մշակում են բանջարեղենը: Դպրոցի տարածքում առկա է 180ք/մ այգի, որտեղ աճեցվում է ազնվամորի, որը նույնպես երեխաների համար է:
26. Դպրոցի տարածքում առկա է 800ք/մ ինտենսիվ այգի: Այգու տարածքը դպրոցի աշակերտների, ծնողների դպրոցի աշխատակիցների կողմից մաքրվել է, ցանկապատվել, սակայն տնկիներ առկա չեն:
27. Դպրոցի տանիքին տեղադրված են արևային վահանակներ 40 մեգաբայթ հզորությամբ:
28. Դպրոցը չունի բացօթյա դասասենյակ՝ ոչ ֆորմալ դասերանց կացնելու համար:
29. ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնական միջավայրի պայմաններն ապահովված են, առկա են թեքահարթակներ, հարմարեցված թվով երկու սանհանգույցներ:
30. Դպրոցում առկա է 21 համակարգիչ, որոնցից համակարգչային սենյակում՝ 17-ը, 4 դյուրակիր համակարգիչ, 3 պլանշետ, 5 տպասարք: Համակարգչայի ֆոնդն ունի համալրման կարիք:
31. Կարիք կա առարկայական կաբինետները համալրել նորագույն սարքավորումներով, ինտերնետ կապով, համակարգիչներով, պրոյեկտորով, որպեսզի ժամանակակից պահանջներին համապատասխան դասեր անցկացվեն:
32. Ուսուցչանոցն ունի վերանորոգման, գույքի թարմացման, ինտերնետ կապով, համակարգչով ապահովման կարիք:



Դիտարկենք մի քանի առանքային հիմնախնդիրներ, որոնց լուծումը մեզ համար առաջնահերթություն ենք դիտարկում.

- Մտադիր ենք ստեղծել «Կանաչ դպրոց»՝ հարակից տարացքն ամբողջապես կանաչապատելով, դպրոցի բակում տնկելով պատերին վեր բարձրացող բույսեր: Մինչև հիմա նմանօրինակ աշխատանքներ մասնակիորեն իրականացվել են՝ առկա է էկո սենյակ, ջերմոցեր, ազնվամորու այգի, ինտենսիվ այգի, տարածքը մասնակի կանաչապատ է: Այս կերպ մտադիր ենք ոչ միան գեղագիտական տեսք ապահովել կամ առողջ միջավայ ստեղծել, այլ «Կանաչ դպրոցը»՝ կարելի է ամբողջապես օգտագործել նաև ուսումնական նպատակներով: Դիտարկում ենք նաև հումուս ստանալու մի շարք եղանակներ:
- Դպրոցի բոլոր մասնաշենքերում կարելի է տեղադրել էկո արկղեր, մակուլատուրա հավաքելու գործընթաց սկսել:
- Սովորողներին կարելի է ներգրավել «Մաքուր դպրոց, մաքուր համայնք»՝ նախաձեռնության շրջանակներում՝ այդպիսով նպաստելով և՛ հարակից տարացքի մաքրման և բարեկարգման աշխատանքներին, և՛ զարգացնել սովորողների սոցիալական և բնապահպանական կարողունակությունները:
- Դպրոցին կից թաղամասում կա այգի, որը նոր է կառուցվել, սակայն անմխիթար վիճակում է գտնվում: Այստեղ նույնպես կարելի է ներգրավել աշակերտներին և նրանց օգնությամբ մաքուր պահել թաղամասի այգին, խնամել ծառերն ու ծաղիկները՝ սերտորեն համագործակցելով նաև համայնքապետարանի հետ:
- Այս ուղղությունը զարգացնելու համար նախատեսում ենք շարունակել համագործակցությունը Էյ-Թի-Փի բարեգործական կազմակերպության, Ջինիշյան հիմնադրամի հետ՝ իրականացնելով մի շարք էկո ծրագրեր:
- Այս էկո արշավը մեծապես կնպաստի նաև սովորողների ԲՏՃՄ կրթության բարելավմանը, ի վերջո՝ բնության հետ անմիջական շփումը կզինի սովորողներին նոր գիտելիքներով ու կարողություններով: Բացի այդ՝ սովորողները կստանան աշխատանքային դաստիարակություն, իրենց օրինակով կվարակեն նաև մյուս դպրոցների սովորողներին, կիրականացնեն համայնքային նշանակության համատեղ էկո ծրագրեր:
- Այս մթնոլորտի ապահովումը կնպաստի նաև սովորողների ֆիզիկական դաստիարակությանը: Կանաչապատ ու բարեկարգ միջավայրում կարելի է իրականացնել սպորտային նախաձեռնություններ, ակտիվացնել առողջ

ապրելակերպը, քանի որ թաղամասի սպորտդպրոցում չեն գործում մի շարք մարզաձևերի խմբակներ՝ վոլեյբոլ, բազկետբոլ:

- Ուսումնադաստիարակչական գործընթացն առավել նպատակային կազմակերպելու համար կարիք ենք տեսնում ստեղծել նաև մի շարք առարկայական կաբինետներ, այդ թվում՝ անգլերենի, ռուսերենի աշխարհագրության, գրականության, որտեղ ապահովված կլինի առարկայական միջավայր, համապատասխան ուսումնանյութական բազա, ինչն առավել մոտիվացնող և ոգևորող կլինի սովորողների համար:
- Կարողունակահեն կրթությունն առավել թիրախային իրականացնելու համար նպատակահարմար ենք համարում դպրոցի փոքր դահլիճը վերակազմավորել՝ դարձնելով ժամանակակից տեխնոլոգիական միջոցներով զինված դասասենյակ՝ հազեցած համակարգիչներով, պրոյեկտոր սարքով:
- Մեկ այլ կարևոր ուղղություն էլ դիտարկում են արևային վահանակների աշխատանքային ֆունկցիոնալության բարձրացումը, ինչի արդյունքում կարելի է հասնել ֆինանսական միջոցների խնայման, որն էլ կուղղվի դպրոցի այլ կարիքների բավարարմանը:
- Մեզ համար կարևոր է, որ որևէ երեխա կրթությունից դուրս չմնա: Ապահովելով որակյալ կրթական ծառայությունների մատուցում՝ մտադիր ենք շարունակաբար ավելացնել սովորողների թիվը դպրոցում՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ դպրոցը կարող է ընդունել մինչև 850 սովորող:


Աղյուսակ 30. Լիցենզիայով սահմանված տեղերի փոփոխություն:

Հրաման	Տարրական	Հիմնական
13.07.2010թ. N 909-Ա/Ք	238	350
16.08. 2016թ. N 818-Ա/2	480	500
	718	850

Աղյուսակ 31. Սովորողների թիվը տվյալ և նախորդ 5 ուստարիների համար:

Ուստարի	1 կիսամյակ	Տղա	Աղջիկ	Տարեկան	Տղա	Աղջիկ
2019-2020	527	288	239	528	287	241
2020-2021	580	315	265	577	314	263
2021-2022	571	299	272	571	300	271
2022-2023	569	288	281	568	288	280
2023-2024	580	287	293	588 592/06.04 դր./	290	298

Գծապատկեր 10. Սովորողների աճի դինամիկան տվյալ և նախորդ 5 ուստարիների համար:



Այսպիսով, փորձենք ստորև բերված երկայուն աղյուսակում ամբողջացնել հաստատության շենքային պայմանների նպատակային գործածության ուժեղ կողմերն ու թերությունները.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Հաստատության շենքը տիպային է, կարող է ընդունել մինչև 850 սովորող:	Հիմնանորոգման կարիք ունի դպրոցի տանիքը, անհրաժեշտ է տեղադրել ջուրը հեռացնող խողովակներ՝ անձրևաջրերի և

	ձնհալից գոյացող ջրերի մուտքը դպրոց արգելափակելու համար:
Հաստատությունն ունի նորակառույց սպորտային դահլիճ:	Պատուհանները, դռները ենթակա են փոխարինման:
Հաստատությունում գործում է էկո դասասենյակ, ARMAT լաբորատորիա	Ջեռուցման համակարգը լիարժեքորեն չի ապահովում դպրոցի կարիքները:
Հաստատության ճաշարանը վերանորոգված է, կահավորված, 1-4 դաս. սովորողները ստանում են տաք սնունդ:	Դպրոցը չունի մի շարք առարկայական դասասենյակներ, թվով երեք լաբորատորիաներն ունեն վերանորոգման կարիք:
Հաստատությունն ունի գործող ջերմոց, արևային վահանակներ, ինտենսիվ այգու համար նախատեսված տարածք:	Գրադարանն ունի վերանորոգման կարիք, գրքային ֆոնդը՝ համալրման, թարմացման:
ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնական միջավայրի պայմաններն ապահովված են, առկա են թեքահարթակներ, հարմարեցված թվով երկու սանհանգույցներ:	Դասասենյակներն ունեն վերանորոգման, նոր գույքով համալրման, ուսումնանյութական բազայով և տեխնիկական միջոցներով համալրման կարիք:
Հաստատության տարածքը թույլ է տալիս վերակազմավորել մի շարք դասասենյակներ, օժանդակ սենյակներ:	Թվով յոթ սանհանգույցներն ունեն վերանորոգման անհրաժեշտություն:
Դպրոցի տարածքը մասնակի կանաչապատ է, դպրոցի բակը հարուստ է բուսականությամբ, հարակից տարածքն անվտանգ է, ցանկապատված:	Միջանցքներն ունեն կոսմետիկ վերանորոգման անհրաժեշտություն, բակում առկա չէ բացօթյա դասարան:
	Միջոցառումների դահլիճն ունի վերանորոգման կարիք:
	Խմբակների սենյակը, պարի և շախմատի, ՆԶՊ-ի դասասենյակները, ARMAT

	լաբորատորիան, ուսուցչանոցն ունեն վերանորոգման, անհրաժեշտ գույքով և միջոցներով համալրման կաիրք:
	Դպրոցն ունի հիմնային կոնստրուկցիաների ամրացման կարիք:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ



Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների բարելավում

Նպատակ 1. Բարձրացնել սովորողների ուսումնական մոտիվացիան և աշխատունակությունը

Խնդիր	Գործողություն	Ժամկետ	Անհրաժեշտ միջոցներ	Արդյունքների չափման մեխանիզմներ	Ռիսկեր
